417

LGA
1008

1999

417

# ԹԱԳԱՒՈՐ ԼՈՒՍԻԿ

ԵՒ

# ՍԵՏԵՒ ՀՈՎԻԿ

Դեռսիմի կռուներու մէջ հովուուհուն կեանքը

ԳՐԵՑ

Ս. ՀԱՅԿՈՒՆԻ

ՎԵՆԵՏԻԿ

ՏՊԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ

1900

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԿՈՎԿԱՍԱԳԻՏԱԿԱՆ—ՄԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ

# ԳՐԱԴԱՐԱՆ

Երուանդ Լալայեանից

Дозволено Цензурою 25 Января 1900 г. г. Тифлисъ.

Հ§ 1009

Գ 1008-60

## ՅԱՌԱՋԱԲԱՆ

Սոյն ժողովրդական վէպն պատմած է մեզ ծանօթ Զար-սանճագցի Մինաս բաբար, որ բուն իսկ նորա բարբառով գրի առի. բայց նկատելով այդ բարբառով գրուածները ժողովրդեան խաւերուն մէջ չեն թափանցեր, ստիպեալ վերածեցի գրական բարբառի առանց իւր ասացուածքի պարզութեան դպչելու. այլ միայն տեղ-տեղ նկարագրութիւնները փոքր ինչ կոկած եմ նոյն իսկ պատմողէն ծանօթութիւններ ստանալով։

Վէպիկս՝ ընթերցողներու առջև կը պարզէ Դէրսիմի լեռներու դիրքի՝ հսկայ անտառներու ու անտառաբնակներու ծանօթութեան հետ՝ նոյն վրանաբնակ ժողովրդեան հովուական կեանքն և ճակատագրի վերայ ունեցած համոզմունքնին, ամուսնական դժուարութիւններն և այդ իսկ պատճառաւ առաջ եկած արիւնահեղ պատերազմներն, որ այսօր իսկ կը շարունակուին քրդական ցեղերու մէջ, նաև նոյն իսկ դաշտային հայ ժողովրդեան մէջ աւելի մեղմ և այլ ձևի տակ, զոր ընդարձակ կերպով նկարագրած եմ Բագրևանդայ հարսանեաց մէջ։

Մինաս այս վէպիկը պատմած է առանց [illegible] առնելու, որոյ համար վստահ եղայ թէ [illegible] այլ բուն իսկ ժողովրդական կը լինի։

Սորանով կարծեմ մի կարևոր ծառայութիւն մատուցած կը լինիմ մեր վիպասաններուն և Դերսիմի դիրքով և կամ նոյն ժողովրդեան կեանքով հետաքրքրուող անձանց։

ԳՐԱԴԱՐԱՆ

# ԹԱԳԱՒՈՐ ԼՈՒՍԻԿ

ԵՒ

# ՍԵՏԵՒ ՀՈՎԻԿ

## Ա.

### Հաւատարիմ Ռէսը

Առաջ ժամանակով կը լինին եօթն ունեւոր եղբայր, ես կասեմ—որ մի թագաւորի հպատակ էին այդ եօթն եղբայրներ. դու ասա.—Կամախու—Քեմախու (ինանինիս Անի ամրոց) թագաւորին:

Այս եօթ եղբայրներ ունէին բազմաթիւ հօտեր և վրաններ. վրանն իրենց շարժական տունն էր, Կամախու սահմանին մէջ՝ Եփրատ գետի ձախ եղրէն մինչև Դերսիմի լեռներու կողերն իրենց հօտի առջև բաց էր. ուր որ ուզէին, յարմար դատէին, իրենց վրանները կը զետեղէին. իւրեանց մի արգելք չկար, վասն զի Կամախու թագաւորն այդ եօթ եղբօր շատ կը յարգէր.

Ասա՛—ինչո՞ւ համար թագաւորն այդ եօթ եղբօր շատ կը սիրէր:—Նորա համար որ այդ եօթ եղբայրներէն մեծը՝ ինչ որ թագաւորի տան պանիր, սեր, կարագ, իւղ պէտք էր, կը հաւաքէր, կը յղեր, այնպէս որ թագաւորի տան մէջ ուտելու թերի մի բան չկար:

Ժողովուրդը իրենց թագաւորական տուրքը այդ եօթ եղբօր մեծին կտար, նա ալ թագաւորին կը տանէր, բայց մի տարի չտուին:

—Դու կը տանես, կուտես, ասացին. որոյ համար թագաւորի չափ հարստացած ես:

Ձմեռը վերայ հասաւ, Թագաւորի մառանները մնաց դատարկ, ոչ պանիր, ոչ իւղ, ոչ մի բան, մի դդալ իւղ անգամ չկայ:

Թագաւորին երբ յայտնեցին. նա զայրացաւ, ասաց,

—Երկու ձիաւորներ շուտ գնան, հարկահաւաքը բերեն, տեսնենք, հիւանդ է, մեռա՞ծ, ի՞նչ եղած է:

Երկու ձիաւորներ նստան իրենց նժոյգ ձիերու վերան, գնացին. գտան հարկահաւաքը, հեծուցին ձիուն, առանց մի զրոյցք անելու՝ քշեցին բերին, հանեցին Թագաւորի առեանը ու խոնարհութիւն արին—բարև բռնեցին կանգնեցան:

—Ռէ՛ս, ասաց Թագաւորը զայրացած, այս ի՞նչ խաղ էր դու իմ գլուխ խաղացիր:

—Ինչո՞ւ, Թագաւոր ապրած, ի՞նչ խաղ:

Ասաց:—Ձմեռ է, ոչ պանիր՝ ոչ իւղ և ոչ մի բան կայ.

—Ժողովուրդը տուրք չտար ինձ, կասեն,—«դու կը տանես, կուտես»:

Թագաւորը բարկացաւ. աթոռէն թռաւ. ոտքը գետին զարկեց, ասաց:—Այդ ի՞նչ յանդգնութիւն է. կը նշանակէ թէ ժողովուրդը ապստամբած է իւր Թագաւորի դէմ:

Գրեց հրամանագիր մի. իւր կնքով զմռեց. կախեց ռէսի կուրծքն ի վայր:—Դէ՛ գնա՛, ասաց. զարկածդ՝ զարկած լինի. ձգածդ՝ ձգած:

Ձին դուրս քաշեց որ հեծնայ. Թագաւորը դէպի ձին նայեցաւ. մի նիհար և կաղ ձի էր:—Ռէս, ասաց, ժողովուրդն որ այդ ձին քո տակը տեսնէ, քեզ տո՞ւրք կտայ:

—Թագաւոր ապրած, ձիս այս է:

—Բեր, այդ ձիու վիզը զարկ, մակը ձիանոցը, ո՛ր մէկ ձին կը հաւանես. հեծիր, երկայն նիզակն առ ձեռքդ, ձին խաղացնելով գնա՛.

Գնաց, նժոյգ ձի մի հանեց դուրս, Թռաւ կռնակը, քշեց ու գնաց. շատ—քիչ գնաց, հասաւ ժողովրդեան վրաններուն. իսկ ինքը իւր եղբայրներու վրաններէն մէկուն մէջ ինքաւ օթևանեցաւ:

Առաւօտեան շուտ զարթեցաւ, խիստ հրամաններ յղեց, իւր մօտ կանչեց իւր տղայոց (ժողովրդեան), որք իւրաքան-



չիւր վրանագլուխ մի մէ մարդ հաւաքուեցան, հազար վրաններէ հազար մարդ՝ առջևը բարև բռնեցին, կանգնեցան. որոց բարևն աչք թարթելով ու մտքով կառնէր. երբէք չէր խօսեր: Երեք ժամ լուռ և մունջ կանգնեցան, ձեռքը բարձրացոյց, նշան արաւ որ նստին:

Ժողովուրդը տեսաւ Թագաւորի նշանը կուրծքն ի վայր կախ, չհամարձակեցաւ նստել, նա զայրանալով ասաց:—Ի՞նչու եկած էք:

—Եկանք քեզ տեսնել. քո կենցաղավարութիւն և վիճակ հարցնել.

—Թագաւորի մարդն այդպէս տեսնել կգան, այ տըխմարներ:

Ժողովրդեան մէջ փսփսուկ մի ընկաւ. իրարու հետ դուրս ելան, խորհուրդ արին, գնացին իւրաքանչիւրը մի մի գառ բերին:

—Մորթեցէ՛ք գառներէն մի քանի հատ, հրամայեց ռէսը:

Անմիջապէս ռէսի հրամանը կատարուեցաւ, հարիւրի չափ գառներ մորթուեցան, ռէսի հրամանը ևս կրկնուեցաւ, որով գառներու մսից զանազան խորտիկներ պատրաստուեցան, և ընդարձակ մարգագետնոյ վերան ամենապատուական գորգեր, կապերտներ տարածուեցան, որոց վերան զետեղուեցան հազարից աւելի ժողովուրդ, կերան գառան միսը, խմեցին անուշ պատուական գինին, դոհուլ՝ դուսանք ածեցին, պարի վարժ անձինք իրարու ձեռք բռնելով՝ բոլոր պար խաղացին:

—Դէ՛, ասաց ռէսը, բաւ է խաղաք. գնացէ՛ք ձեր տուրքը բերէք.

Թոյլ տուին պարն ու միմեանց ձեռքը, վազէվազ գնացին իւրեանց վրաններն, ամեն մէկն որ մի ոչխար պիտի բերէր, երկուս բերեց, մի բեռ իւղ պիտի տար, երկուս տուեց, նոյնպէս կարագ, պանիր, մեղը ևն:

Հաւաքեցին մի վայր, յանձնեցին երկու մարդու, որք տարին զետեղեցին Թագաւորի մառաններու մէջ լեվ—լեցուն.

Թագաւորը ռէսը կանչեց:—Զօրանաս, ռէս, ասաց,

մառաններու մէջ այլ ևս տեղ չկայ մի բան դնելու։

Ձեռքը տարաւ գրպանը, հանեց հարիւր ռուբլի տուեց ռէսին։

—Ռէ՛ս, ասաց, դու շատ գործունեայ մարդ կերևիս։ Օվաճուխա դաւառի Թուահամարի տօմարը քեզ պիտի յանձնեմ. որոնք եօթ տարի է տուրք չեն տուած. պիտի հաւաքես, բերես։

Ռէսը առաւ տօմարը, դնաց—հասաւ, Դերսիմի լեռներու մէջ գտնուող ապստամբ Օվաճուխցիներու առջև դրեց, որոց անունները մի մի կարդաց, ու ասաց։—Դուք այս եօթ տարի է տուրք չէք տուած, Թագաւորը կուզէ։

Վրանաբնակները դնացին, իւրեանց տուրքը հաւաքեցին, մի տեղ բերին կուտեցին։ Եօթը տարուան տուրքը քառասուն ուղտի բեռ եղաւ։ Բարձաւ ուղտերուն, ինքն ևս հեծաւ ձին, ուղտերը խառնեց առաջ. ընկաւ ճանապարհ, տարաւ—հասուց Թագաւորի ապարանքը։

Թագաւորը նստած տեղը լսեց որ ուղտերու զանգի ձայնը քաղաքը կը դղրդեցնէ—կը վերցնէ։

—Այս ի՞նչ է, շո՛ւտ, մի լուր բերէք, ասաց։

Սպասաւորք մի ակնթարթի մէջ դուրս թռան, ու դարձան.

—Թագաւոր ապրած, ասացին, ռէսն է, ուղտերով կգայ։

Թագաւորը հոգւով ու սրտով ուրախացաւ. դէպի ռէսը ունեցած սէրը քառապատկեցաւ, այնպէս սկսաւ սիրել որ մի աչքը միւսին չտար։—Միշտ մօտս պիտի մնաս, ապարանքիս մէջ ինձ հետ պիտի ուտես ու խմես, հագուիս ու կապուիս, քնիս ու զարթիս, ասաց։

Նա այնչափ առաջ եկաւ, որ Թագաւորին սեղանակից եղաւ, զբաղեցաւ Թագաւորի գործերով, այլ ևս մոռացաւ իւր տունը և եղբայրները։ Մի օր եղբայրներէն մին լուր յղեց սորա։

—«Եղբայր, դու այդ տեղ արդելուեցար—մնացիր. Թագաւորին հացն և վայելքը շատ, կուտես և հանգիստ կեանք կը վարես, արդեօք երբէք մտքէդ կանցնե՞ս թէ եղբայր ունեմ, չես ասեր, մահ ընկաւ, մեր հինգ եղբայրներն ևս մեռան, միայն ես մնացի տունը կառավարող, հօտը շատ է. չեմ կարող ամէն կողմ հասնիլ. արի՛, քո հօտին և կայքին տէր դարձիր»։

Եղբայրը պատասխան գրեց,—«Ես մի կին ունէի, այն ևս մեռած է, այլ ևս ինձ համար տուն և կայք պէտք չէ, հօտն ևս քեզ լինի, վաստակէ ու կեր»։

Փոքը եղբայրը հովիւ բռնեց, հօտը յղեց սար։

Հովիւը հօտը սարի կրծքի վերան կարածեցնէր, կէս աւուր միջոցին կիջեցնէր գետի վերան, ջուր կը խմեցնէր, ինքն Երզնկայ ևս մի հրէայ քարեկամ ունէր. ինչ որ հօտի արդիւնքից կը գոյանար իւղ, պանիր, կարագ, բուրդ ևն. կը տանէր այդ հրէային կը յանձնէր որ վաճառէ, ինք կը դառնար տուն։

Հայ գրող
Բ.

## Մերհան պօղազի (բուսի անցք)

Մի տարի՝ երեք օր, երեք գիշեր սաստիկ ձիւն տեղաց—մարտ ամսուան մէջ, այնպէս որ սար ու ձոր, դաշտ ու տափարակ, քար և քառ՝ ամէն ինչ ձիւնով ծածկուեցան, ծառներու ճիւղերը ձեան ծանրութենէ կոտորուեցան, տանն ծառներու ճիւղերը ձեան ծանրութենէ կոտորուեցան, տանն մաս ծառոց ճիւղերու կեղևն կը կրծէին։ Մի ամսոյ չափ շատ նեղուեցաւ այդ փոքը եղբայրն, իսկ երբ դարձան մի-ջին ամիսը մտան, մի հով փչեց, մի առատ անձրև տեղաց. երեկոյին անձրև տեղաց, առաւօտեան երկրի երեսն խատուտիկ դարձաւ. կրկին անձրև ու տարափ տեղաց, այս անդամ երկիրը խաղաց (երկրաշարժ), ձեան հիւսը սընթաց սահեցաւ, ամպերն ցրուեցան, կայծակն ու փայլակ որպէս հուր զարհարհ լցին։

—Հովի՛ւ, ասաց, դու այդ սևացած կողերու վերայ արածէ, իսկ ես գնամ այս լեռան կուրծքն ի վեր, մի անարածէ, իսկ ես գնամ այս լեռան կուրծքն ի վեր, մի ան-

գամ նայիմ թէ ինչ կայ, գիշերը այդ կողմէն դղրդիւնէ արձագանգ լսեցի։

Հովիւն իւր հօտը իջուց ջրի եզրն, ինքն ևս քիրը առաւ իւր ձեռքը, բարձրացաւ այն ձորը, որ երկրաշարժէն բացուած էր, բարձրացաւ ձորի գլուխը, նշմարեց որ անանցանելի և սեպ լեռնաշղթայն երկուքի բաժանուած՝ միջէն ճանապարհ բացուած է։ Մտաւ, այդ ճանապարհով առաջ գնաց, գետնի վրայ տեսաւ հաւկթի չափ մի կարմիր, կլոր քար, որ գեղեցիկ ճառագայթներ կարձակէր, այնպէս որ իւր աչքերը կը շլացնէր։

Գետնէն վերցուց այդ քարը, ձգեց իւր գրպանը։

Շարունակեց իւր գնացքը, իրարու ետևէն նոյնանման քառասուն քարեր գտաւ։ ամբողջն ևս հաւաքեց, վերջիններըը ծտի ձուի չափ էին։

Այս ձորի գլուխն անցք մ'էր բացուած, Դերսիմի լեռները մտնելու հնարաւորութիւնը դիւրացած էր, ապա թէ ոչ կողմնակի ճանապարհով մի շաբաթ պիտի տևէր հօտը այդ տեղ բարձրացնելու. սակայն այժմ մեր հարկահաւաքի եղբայրը 3 ժամէն իւր նպատակին պիտի հասնէր. նա չափազանց ուրախ էր, բարձրացաւ լեռան գլուխը, լաւ դիտեց իւր հօտի անցնելու ճանապարհը, դարձաւ իւր տունը։

Առաւօտեան վաղ անկողնէ բարձրացաւ, հովուին պատուիրեց.

—Ես կը գնամ քաղաք (Երզնկայ), դու հօտը կը բարձրացնես այն անցքը, որ նոր բացուած է։

Ինք քաղաք իւր հրէայ բարեկամի մօտ գնաց, կարագ ու սեր տարաւ. գնաց, նստաւ կրպակը. միտքը ընկաւ իւր գտած քարերը. հանեց, ցոյց տուեց հրէայ բարեկամին այդ քարերու ամենափոքրը։

—Այս քարը մարդու չյայտնես, եթէ պիտի վաճառես, ես կը գնեմ, ասաց հրէան, այս քարը թագաւորն եթէ տեսնէ, քո ձեռնէն բռնի կառնէ, վասն զի թանկագին քար է։

Ոչխի եղբայրը մեծ քարը հանեց գրպանէն որ ցոյց պիտի տար. մինչև փողոցը քարը ճառագայթներ արձակեց, այդ միջոցին թագաւորը փողոցէն կանցնէր, տեսաւ ճառագայթ-



ները, մտաւ կրպակէն ներս, առաւ քարն իւր ձեռք՝ ասաց։

—Այս իմ գանձարանէն է, դու ո՞ւստի գողացար։

—Ես լեռան մէջ գտած եմ, ասաց։

—Գանձարանիս մէջ հինգ քար կայ, որ նոյն քարեր տեղն եղան, քոնն է. որ չեղան, իմս է, այս մէկը՝ միւս չորսն ևս կը պահանջեմ։

Կամախու թագաւորը բռնեց այս մարդն, իւր հետ առաւ գնաց. գանձարանը բացին, տեսան որ թագաւորի քարերն այն տեղ են, ասաց։

—Որդի, այս քարերն ո՞ւր գտար։

Հեռուէն ցոյց տուեց երկրաշարժէն քանդուած լեռն. ասաց։

—Դէ՛, ահա, այն լեռան մէջ, թագաւոր ապրած։

Թագաւորը թոյլ տուեց այս մարդը. մարդն է, գնաց իւր տուն, առաւ հօտն ու բարձրացաւ սար, մտաւ նոր բացուած անցքը, հանդիստ գլուխն ելաւ, ոչխարները տարածեց յարօտ. ինք դադաթէն նայեցաւ դէպի այդ նոր անցքն, որ իրեն համար շատ կարևոր էր, ուզեց անուն դնել, յիշեց իւր գտած քարերն, օրը բուստ էին, դորա համար Մէրճան—Պողաղի անուանեց որ կը նշանակէ բուստի անցք։

## Գ.

## Սեսեն հովիկ

Մեր հօտատէրը լեռան գլուխն իւր վրանը զետեղեց, հօտը շատ, ինք մարդ չունէր, չէր կարող կառավարել. իւրեան ևս տղայ—մղայ չկար, յողնած և ձանձրացած էր այս—այն կողմ վազվզելով, մի օր ձեռներն և աչքերն դէպի երկինք բարձրացնելով սրտառուչ խնդրեց։— Ո՛վ սուրբ Տիկին, (1) կը խնդրեմ, ինչ կը լինի, այլոց որ տղայ ու աղջիկ տուած ես, ինձ ևս մի զաւակ տաս։

1) Մի ուխտավայր է Զարսանմացի գաւառին մէջ։

Այս մարդն աղօթեց ու քնեցաւ, երազին մէջ լրեն ձայն եկաւ, թէ—«Ինկանդ թեզ մի սեռեւ քար կայ, նաև քո մօտի բուստերէն մին այդ սեռեւին հետ կը մանրես, Մղուրայ ջրէն ևս մի խայտախառիւ ձուկ (1) որոց հետ կը տրորես, դու և կինդ միասին կուտէք։

Քնից երբ զարթեցաւ, քանդեց ինոջ դաստակին կապած սեռեւ քարը, հանեց իւր գրպանէն մերճանը, միմեանց հետ մանրեց, որոց հետ ևս ծեծեց չորացած խայտախառիւ ձուկը, մի խմոր շինեց, ինք և կինը միասին կերան։

Նրանք ուրախ և զուարթ էին, հաստատուն համոզուած էին որ իւրեանց ամլութեան գլուն եղծուած է, այլ ևս զաւակ պիտի ունենան, բայց ինչ զաւակ։—Աղջիկ զաւակ թող լինի, կասէր կինը, որովհետև աղջիկն ամեն կերպով մեր տան օգտակար է, գառները կը պահէ, ոչխարներ կթելու կօգնէ, միասին իւղ պանիր, մածուն ևն, կը շինենք, գորգ ու կապերտ կը գործենք, կարուձև կանենք, լուացք ու աւել կանենք, թունդիր ու բուխերիկ կը վառենք, հաց ու մաց կը թխենք, կերակուր ու ապուր կեփենք ևն։

—Այ կին, կասէր այրն, Աստուծմէ խնդրենք, թող ապրուլ լինի. մեր կայքն ու հօտը շատ—շատ է, որոց վերան հսկող ու կառավարող պէտք է։

—Աստուած ինչ որ կը կամի այն թող շնորհէ, իւր կամքն է։

Անցաւ լինն ամիս, լինն օր, լինը ժամ, լինը վայրկեան Աստուած տուեց, մի աղջիկ ծնաւ։

Քառասունքը լրացաւ, այրն ապատէր տուն դալու, ինոջմէ և նորածին երեխայէն տեղեկութիւն հարցնելու։ Եկաւ, ինոջ հետ միասին փառք տուին Աստուծոյ, որ զիրենք սիրեց, անզաւակ չթողեց։

—Մարդ, ասաց կինն, այս ինչ բան է, չասեմ (2) որ

1, Խայտախառիւ ձուկն կը չորացնեն աղեղի վերջ, իսկ երբ զարնան տաւարներ կը ծնին, նրանց կը կերցնեն, որոց սթինքներու երակներն շայնանան եւ առաս կաթ տան։

2 Մի կասկածելի կամ տհամելի լուր հաղորդելու միջոցին «չասեմ» բառը կը գործածեն։



երեխային աչքը կարմիր արիւն լցուած է, չբացուիր։

Մարդը երեխայի աչքը բացաւ, նայեց որ իրօք արիւնի ու բուստի կը նմանի, ասաց ինոջ։—Մագինեն երբ կը կթես, արգանդիդ վերան կը կպիս, նորա համար է որ արիւնը լճացեր է, բան չկայ, կանցնի։

## Դ.

## Թագաւոր Լուսիկ

Այդ իւր տեղը մնայ, մենք սկսենք Բերդակու թագաւորին տեղեկութիւն տալ։—Բերդակ Զարսանճագի երկրին մէջ՝ Մուրատ գետի աջ կողմը կը գտնուի։

Բերդակի թագաւորի թագուհին ծանր հիւանդ էր, ոչոյ համար տխուր էր, երեսները խոժոռ, հառաչանքներ կարձակէր։

—Սիրելի թագուհիս, ասաց թագաւորը, մի այդպէս տխրիր, քանի որ կայ դեղ ու դարման—մեր Սուրբ Տիկին, այլ ևս հառաջանք ու հեկեկանք ինչ բանի համար են, վաղ առաւօտ քեզ յղեմ Սուրբ Տիկին դնա՛, ուխտ արա՛, կըլաւանաս։

Հետևեալ օր թագաւորը զթագուհին յղեց Սուրբ Տիկին, նա գնալուն պէս մտաւ ներս, համբուրեց զՍուրբ Տիկին, խունկ և մոմ վառեց, բազկատարած աղօթքի կանգնեցաւ, նորա վերան հանգստութիւն մի եկաւ, փառք տուեց Աստուծոյ։

Սուրբ Տիկին օթևանելու սենեակներ կային, թագուհին իջևանեցաւ մի սենեակ որ հանգստանայ։

Կէս գիշերին ցաւը բռնեց։—«Վա՜յ մեռայ—վա՜յ մեռայ», մինչև լոյս ձայն ձգեց։ Թագաւորին լուր յղեցին.—Թագուհին կը մեռնի։

Լրատուը շնչասպառ թագաւորին հասաւ։

Թագաւորը շտապմամբ ձին քաշել տուեց բերդի դռան կուշտը գտնուած հեծելաքարի մօտ, որ հեծնայ, աչքը դար-

ձուց դէպի Սուրբ Տիկինայ կողմն որ մէկ անգամ երեսը խաչակնքէ ու այնպէս ձիու վրան բարձրանայ։ Նա այս մի-ջոցին ինչ տեսաւ։—Տեսաւ մի զարմանալի գիսաւոր, որ աշխարհ լոյսը բռնեց, տակաւ առ տակաւ ելաւ Սուրբ Տիկինայ վերայ։

Թագաւորի սիրտն երկիւղ պատեց, մազերը վիշաքաղե-ցան, չհամարձակեցաւ գնալ, դարձաւ բերդ, մի մարդ յղեց։

—Գնացէ՛ք, ասաց, մի լուր բերէ՛ք, տեսնենք, այդ ի՞նչ է պատահած։

Սուրհանդակը սընթաց գնաց, մտաւ ներս, ժամկոչին գտաւ, հարցուց։

—Թագուհին ինչ վիճակի մէջ է։

—Թագուհին մի արու երեխայ ծնաւ, պատասխանեց ժամկոչը։

Սուրհանդակը արագ—արագ մօտեցաւ դռան, երե-խայի ձայնն որ ականջին առաւ, վազէ—վազ գնաց, հեծաւ ձին ու քշեց—գնաց։

—Աչքդ ի լոյս։ Թագաւոր ապրած, մի երեխայ եղած է քեզ։

Թագաւորն այլևս չգնաց Սուրբ Տիկին, եօթն օր ու եօթը գիշեր պար բռնել, ուտել ու խմել և ուրախութիւն անելու հետ եղաւ։

Եօթն օր որ լրացաւ։ Նստաւ իւր ձին, գնաց Սուրբ Տիկին, որ երեխայն այդ վանքի մէջ մկրտել տայ։

Քահանայն երեխայն մկրտելու միջոցին հարցուց թէ անունը ի՞նչ պիտի դնեն։ Թագաւորն ասաց։—Այն լոյսն որ տեսայ, անունը Լուսիկ թող լինի։

Տղան մկրտեցին։ անունը Լուսիկ դրին։



## Ե։

## Լուսիկ կրթուելու հեռ

Այլոց երեխաներն որք տարով կը մեծանային, Լուսիկ օրով կը մեծանար։ Եօթ տարի որ լրացաւ, Լուսիկ իւր հա-սակը առած՝ մի գեղեցիկ, ուժեղ և յաղթանդամ երիտա-սարդի կերպարանք ստացած էր։

Թագաւորը մի ծերունի որսորդ ունէր։ մի օր Թագա-ւորին ասաց։

—Թագաւոր ապրած՝ մեր Լուսիկ մի տեղէն նետ ու աղեղ ձեռք ձգած է, կերթայ, աղբիւրի ական մէջ կը պա-հուի, ով որ աղբիւրէն ջուր տանելու կգայ, եկողին կժան կը հարուածէ ու կը ծակէ։ օրը հարիւր մարդ դանդատաւոր կը գան Լուսիկի վերայ։

Թագաւորն ևս ուրիշ որդի չունէր, միայն այդ մէկն էր, շատ կսիրէր։

—Ծերուկ, ասաց, ի՞նչ անեմ ես, երեխայ է, սպանե-լու չգար, մի փոքր հրացան գտիր, հետդ որսի տար, որ այլոց նեղութիւն չտայ, չգան մեր մօտ դանդատ։

Ամեն օր ծերունին Քավէյու լեռն որսի կերթար։ Լու-սիկն ևս միշտ հետն էր։ Ամէն օր երբ որսի կերթային, իւ-րեանց ճանապարհն Սուրբ Տիկինայ առաջէն կանցէր, այն տե-ղէն կանցնէին, կը դառնային, այն տեղ կը հանգստանային։

Մի շաբաթ երեկոյ էր, աղջիկներ խումբ—խումբ ուխտ եկած էին Սուրբ Տիկին։—Սիրեմ քո աչք, Լուսիկ,—ի՞նչ կանէ Լուսիկդ։—աղջիկներն որ տեսաւ, գնաց մտաւ որոց մէջ, իսկ ծերունին իւր շուրջն նայեցաւ որ Լուսիկ չկայ։—Ժամկոչ, ասաց, ո՞ւր է Թագաւորի տղան։

—Քու Թագաւորի տղան, ո՛ր մէկ աղջիկն որ գեղեցիկ է, կերթայ, կը կնմթէ, այդպէ՞ս տղայ կը պահեն, աղջիկներ երկիւղից ձայն չեն կարող հանել։ վասն զի Թագաւորի տղայէ։

Տղան ելաւ դուրս։—Լուսիկ, ասաց ծերունին, ո՞ւր կորսուեցար, գնացիր մօտէս, մինթէ այդպէս պիտի հետևիս լինա։

—Գնացի, Սուրբ Տիկին համբուրեցի. ասաց:

—Հա՛, այո՛, ասաց, գնացիր գեղեցիկ աղջիկները տեսար, չէ՞ որ միշտ այս դռնէն կանցնէինք, մի օր ինչո՞ւ չգնացիր համբուրելու, միայն այս օր միտքդ ընկաւ. մեծաւորը մարդու տղայի վայել չէ արածդ, Լուսի՛կ:

Լուսիկ զգաց որ ժամկոչն է իւր վերայ դանդատաւորը, խոժոռեցաւ:

Ծերունին ասաց:—Քո հայրն զքեզ ինձ յանձնած է, Լուսիկ, քեզ կը կախեմ, կը ծեծեմ, նաև Քավէյու անտառին մէջ կը թողեմ որ եօթն օր ման գաս, ճանապարհ չգտնես դուրս գալու, Գառնկերտի լեռը կը ձգեմ, կը խեղդուիս. այս ամենը իմ իրաւունքն է, իմ ձեռքն է, այնպէս շարժէ որ քո վերան դանդատաւորը չգայ:

Ծերունին մի կողմէ կը խրատէր, միւս կողմէ իւրեանց ճանապարհը կը շարունակէին, իսկ Լուսիկ լուռ ու մունջ կերթար, ծերունին ասաց:

—Խոռուած կախարդ . . . . . ես ինչ որ կասեմ, քո հոգը չէ, մի ականջովդ կառնես, միւսէն դուրս կտաս, օրը հարիւր մարդ դանդատաւորը կգայ վերադ, մինչև ցայսօր պահպանեցի, խրատեցի, չեղաւ. քեզ հրացան առի, Քավէյու լեռն որսի տարի, դարձեալ չեղաւ, ամեն բան սովորեցուցի քեզ, չեղաւ, այլ ևս թերի մի բան թողեցի՞ քո վերան:

Լուսիկ իւր առջև կը նայիր, հեռուն—հեռուն կերթար:

Ծերունին քէն արաւ, այլ ևս չխօսեցաւ հետը, մինչև քերդը հասան:

## Զ.

## Ճակատագիր

Երեկոյին քնեցան. կէս գիշեր էր, Լուսիկ խոր քնոյ մէջ ընկղմած մինչոցին երազ մի տեսաւ՝—ինչ երազ. տեսաւ—մի վրանատէր, այր և կին, որք մի աղջիկ ունին, այդ աղջիկը որ Լուսիկի հետ մի աւուր մէջ ծնած է. ճակատագրի որոշմամբ Լուսիկի գլխուն գրուած է:



Լուսիկ զարթեցաւ.—Հա՛, ասաց, գեղեցիկ աղջիկներն ինձ չեն ներկայացնէր, հովուի տգեղ աղջիկը կը բերեն, գլուխս կը գրեն:

Մինչև արշալոյսն բացուեցաւ, Լուսիկ հինգ անգամ երազ տեսաւ թէ—քո գլխուն հովուին աղջիկը գրուած է, քո բաղդն այն է:

Լուսիկ առաւօտեան վաղ անկողնէն բարձրացաւ, դնաց ծերունու ձեռքը համբուրեց, լուռ ու մունջ առջևը կանգնեցաւ:

—Քեզ հետս այլ ևս չպիտի տանեմ, ասաց, ձեռս և ոտս ևս մի համբուրեր.

—Բաբա՛, ասաց, այլ ևս յանցանք չեմ գործեր, ինձ ներէ՛:

Ծերունու սիրտը մեղմացաւ, մտան ճանապարհ, բերդէն մի ժամու չափ հեռացան:—Բաբա, ասաց Լուսիկ, դէպ Սուրբ Տիկին միւս կողմ մնաց, մենք շեղ կերթանք, կերթանք ճանապարհը սխալուած ենք:

—Այդ քո բանը չէ, Լուսիկ, դու ինձ հետևէ, մի կարծեր թէ Սուրբ Տիկնայ երեսն այլ ևս տեսնես, այնպէս տեղ պիտի տանեմ որ քեզ ասեմ, «դէ՛, գնա տուն», մի ամիս անտառի խորը մոլորուես, տան ճանապարհը չգտնես:

Լուսիկ ծերունու այս խօսքերու վերայ շատ զայրացաւ, ինքն իրեն մտածեց.—«երկու հրացանն ևս իմ մօտս է, սորա ետևէն մի հարուած տամ, սպանեմ, ինչ պիտի անէ ինձ»:

Ծերունին ամեն իմաստութեամբ լցուած էր, հասկացաւ Լուսիկի միտքը. յանկարծ յետ դարձաւ, տեսաւ որ Լուսիկ ինքն իրեն կը ծիծաղի:

—Հա՛, ասաց ծերունին, խրատներս քո գլուխը չմտներ, սկսած ես վատ-վատ բաներ խորհել, որդի, ինչ որ կասեմ, քեզ համար է, լսէ՛, չես զղջար:

Ծերունին զայրանալ ձևացուց. Լուսիկի հետ չխօսեցաւ, մինչև հասան Ծառգովիկայ մեծ անտառն. իսկոյն այն տեղ ձայն մի առին, ծերունին ասաց:

—Լուսիկ, քո ականջները սուր է, ուշադրութեամբ լսէ՛ այդ ինչ ձայն է:

—Ձայնը եռանէն է կգայ, Ծառգովիկայ ներսի կողմն ո՛վ կարող է թափանցել, բաբա՛, ասաց Լուսիկ.

—Աչքդ լուսաւոր է, որդի, ուշադրութեամբ նայէ՛. տե՛ս, անտառի շուրջը վրան կա՞յ, մենք դեռ անտառի եզրն ենք, մէջը չենք մտած, չենք այլ կարող մտնել. վասն զի շատ խիտ է, երբ մութը կոխեց, անտառի եզերքը պիտի պառկենք, արջ, խոզ և գայլ մեր վերայ յարձակում գործեն, պիտի սպանենք, իսկ այս անտառի մէջ գտնուած վայրենի մարդը չնմանիր խոզի, արջի, ապա խիստ շատ ուժով է, նորա սպանել անհնարին է, վասն զի նա երբ ձեռք ձգէ կաղնի մեծամեծ ծառներն արմատախիլ կանէ, նորա դնդակ չբանիր, թուր չկտրեր. նորա մահ չկայ, նորա մահն այն ժամանակ է, երբ սեաւ ամպը կը պատէ երկինքն ու երկիրը, միայն կայծակը կը հարուածէ, կը մեռնի և եթէ կայծակէ թուր լինի, միմիայն մի անգամ որ զարկիր, կը մեռնի:

Այս անտառին մէջ լիքն են վայրենի մարդիկ:

Լուսիկ խորհեցաւ.—իմ հօր կայծակի կտորէ շինուած թուր կայ. մի անգամ ևս երբ այս անտառը գամ, հետս պիտի բերեմ, որ կարողանամ անտառի ներսն թափանցել, սպանել նոյն տեղ գտնուած վայրենիներն. Եթէ ոսուտէ, վայրենի չկայ, այն ժամանակ կայծակէ թրով այս մարդու (ծերունու) գլուխը կը կտրեմ:

Անտառի մէջի ճանապարհը թոյլ տուին, եզերքով շարունակեցին առաջ գնալ. շատ ու քիչ առաջ գնացին, Աստուած գիտէ, մի աղբիւրի առաջ մի վրան տեսան, մտան ներս, բարև տուին, բարև առին, վրանի վերին կողմը փռուած գորգի վերան բազմեցան:

Վրանը մեծ էր, սակայն մէջը միայն մի մարդ և կին կար, նաև մի անդամալոյծ եօթ տարեկան աղջիկ, ունէին շատ հօտ, իրենց հօտը կառավարողն երկու շուն էին, որ հօտի երկու կողմէն պահպանութիւն կանէին, կը տանէին սար, ապա երեկոյին անվնաս կը վերադարձնէին. հօտի տիրոջ անունը Փօթ էր, Փօթ միայն օրը երկու անգամ կը բարձրանար իւր վրանի բարձրը գտնուած բլուրի գագաթն, ուստի կը դիտէր իւր հօտին թէ ինչ կողմ կը գտնուին, նաև թէ արդեօք պատահար մի եկած չէ՛:



Այդ վրանի մէջ Լուսիկն ու ծերունին իրենց որսը շինեցին խորոված ու կերան, ապա պառկեցան, քնեցան:

Գիշերը Լուսիկ երազ տեսաւ, երազի մէջ իրեն ասացին.

—Այս վրանի մէջ գտնուած անպէտք—անդամալոյծ աղջիկն է որ քո գլուխը գրուած է, քո բաղդն այդ է. այդ է քո նշանածը:

Թագաւորի տղան աչքը կը բանայ, կը գոցէ, դարձեալ նոյն երազը կը տեսնէ:—Այս լինէր, մի անգամ տեսնէի թէ ինչ տեսակ աղջիկ է, կը մտածէր նա:

Առաւօտեան Լուսիկ նայեցաւ որ աղջկան տակ հին վալաս մի և կապերտի կտորտուանք ձգուած են, շապիկն ևս կտրտուած՝ ճոթ ու ճոթեղեր չկայ, մի մերկ և կեղտոտ աղջիկ, աչքը գոց՝ կռնակի վերան պառկած, վերևն ևս մի փրթած թաղիք, որ քառասուն տեղէ ծակ ունի, քաշած է երեսին ու պառկած է, այս այն կողմ շարժելու անկարող:

Փօթն էր, առաւօտեան շուտ հօտը դուրս հանեց, մի քիչ առաջ քշեց որ շներու հսկողութեան յանձնէ, գնայ ուրիշ գործի. աղջկան մայրն էր, կուժը ուսն առաւ, գնաց ջուր բերելու:

Արեգակը նոր ծագեր էր աղջկան վերան, Լուսիկ մի անգամ ևս աղջկան վերայէն թաղիքը մի կողմ քաշեց, ինչ անգամ ևս աղջկան վերայէն թաղիքը մի կողմ քաշեց, ինչ տեսաւ,—աչքը փակուած է, չտեսներ, գլուխը քաչալ է ու գտակ չկայ. Աստուած թշնամիէս հեռու անէ, զզուելի հոտ կգայ որ երբէք տեսնելու բան չէ:

—Այս ինչ է որ միշտ երազիս մէջ կը տեսնեմ. Սուրբը Տիկին ուխտ գնացող զարդարուած գեղեցիկ աղջիկներն իմ գլուխս չեն գրեր, այս անպէտք—հոտած աղջիկը կը գրեն, կաց. սպանեմ զայս, թող կորսուի գնայ, տեսնեմ ինչպէս ինձ վնասուած կը լինի:

Լուսիկն ու ծերունին վրանէն ելան, ընկան ճանա-

պարհ որ պիտի գնայինն, տղան (Լուսիկ) ասաց.—Վա՜յ, բաբա՛, վառօդի պատեանը մոռացայ վրանի մէջ, վոքը ինչ սպասէ, գնամ բերեմ:

Ծերունին բարձրացաւ մի դարի վերան, նստաւ.

Լուսիկ մտաւ վրանը, վառօդի պատեանն անցուց պարանոցը, գնաց աղջկան մօտ, վերևի թաղիքն մի կողմ տարաւ, քաշեց դանակը, որ կոթն ամբողջովին ակունքով զարդարուած էր, զարկեց աղջկան փորին, դանակի ծայրն ծակեց անցաւ, միւս կողմէ մտաւ դետին, մխուեցաւ, ամրացաւ մնաց: Լուսիկ քանի անգամ քաշեց—քաշեց, դուրս չեկաւ, թող տուեց, գնաց:

Լուսիկն է, թէ կը գնար, թէ կասէր:—Տեսնեմ, ո՞ղջէս իմ գլուխս պիտի դրուի:

Լուսիկ եկաւ, գտաւ ծերունին, միատեղ գնացին ի-բենց տունը.

Մի քանի օր մնացին տունը, մի օր ծերունին ասաց:

—Լո՛ւսիկ, պատրաստուէ, որսի գնանք:

—Բաբա՛, ասաց, ո՛ւր և կուզես, կը գնաս, կգամ, բայց Ծառդովիկայ անտառի կողմը չեմ գար:



## Բ.

## Սեսեւ Մուզուրայ ջրով կառողջանայ

Այժմ դառնանք աղջկան:

Մայրը ջուրը բերեց, գնաց ցախ բերեց, կրակ վառեց, կաթը տաքացոյց, տունը կարգի դրեց, աւլեց, մաքրեց, տեսաւ ճաշուայ միջոցն է:

—Վա՜յ, ասաց, մոռացայ իմ աղջկան խնամ տանել, այսչափ քնի՞լ կը լինի:

Թաղիքը վերևէն մի կողմ քաշեց, տեսաւ աղջկանմենէ շունչ ու շշունչ դուրս չգար, մի քիչ ևս ուշադրութիւն դարձոյց, տեսաւ պորտին վերայ մի բան կը փայլի, ձեռք



ձգեց որ մի դանակ, քաշեց—չքաշեց, դուրս չեկաւ, կոթէն մի չուան կապեց ու քաշեց, երբ դանակն դուրս թռաւ, աղջիկը սաստիկ ճիչ արձակեց, ամբողջ դետին արիւնով լճացաւ. Մայրն անմիջապէս հավաժիվա, մոմ, մեղր, կարագ իւղ խառնեց միմեանց, դանակին տեղը կարեց. դեղը լցեց վերան, ծիծը տուեց բերանը. եօթ տարեկան էր, դեռ կը ծծէր:

Կինը սկսաւ մտածել թէ երեկոյին ինչ պատասխան տայ իր մարդուն. Երեկոյին Փօթ եկաւ:—Աղջկան վիճակը ինչպէս է, հարցուց:

—Հա՛, ասաց կինն, Աստուծմէ բարին չխնդրեցինք, այլ ասացինք «Աստուած մի դաւակ տայ, ինչ կը լինի, թող լինի». այժմ Աստուած մեզ մի անդամալոյծ տուած է, պիտի տանենք:

Փօթ իւր աղջկան երեսն նայեցաւ, խղճաց, դէմքը մռայլեցաւ, մտատանջութեան մէջ ընկաւ, հիւանդացաւ. քունը աչքերէն կտրաւ: Արշալոյսին էր, քունը ծանրացաւ վերան, քնոյ մէջ ձայն մի լսեց:

—Ելի՛ր, Փօթ, ելիր, շատ հոգ մի աներ, Աստուած քեզ պիտի օգնէ, վրանդ բարցիր, քշէ՛ հօտդ, գնա՛ Մուզուրայ Ջրի գլուխը, որ աղջիկն այն տեղ գտնուած Մուզուրայ ակներու մէջն ակը ձգէ:

Փօթ բարցաւ վրանը, հօտը խառնեց առաջը ու քշեց, աղջիկն ևս փութաթեց քրջերու մէջ, կապեց Ջորի վերան. գնացին:

Շատ ու քիչ երկու օր գնացին, Մուզուրայ Ջրի գլուխն ի՞ջևանեցան:—Կնի՛կ, ասաց Փօթ, դու վրանը կանգնէ. ես կերթամ ու կգամ:

Դու մ'ասեր, ինչպէս կնիկն աղջկայ վէրքն չյայտնեց Փօթին, Փօթն ևս իւր երազն չյայտնեց իւր կնկան: Շալակեց, աղջիկը տարաւ:

Աղջկան աչքը չէր բացուեր որ տեսնէ թէ ո՞ւր կերթայ:

—Հայրի՛կ, գիս ո՞ւր կը տանես, ասաց.

—Զաւակս, ասաց, պիտի տանեմ, լողացնեմ տաք Ջրի մէջ:

Հասաւ Մուզուրայ Ջրի ակը, Փօթ իւր շալակէն յանկարծ ձգեց մէջ տեղ գտնուած ակը, Ջուրը շատ սառն էր. սկսաւ ատամները չընկրտացնել, դողդողալ ու սնկռտալ:

Փոթ իւր աղջիկը ջրից հանեց, փաթաթեց մաղէ հիւսած փալասի մէջ, թաղիքն ևս ձգեց վերան, ծածկեց ու հացը կերաւ։

Աղջիկն էր քիչ քնաւ, իբրև ողջ առողջ կանգնեցաւ։

Փոթ առաւ աղջիկն, գնաց տուն, ինքը գնաց հօտի մէջ, երեկոյին դարձաւ տուն, հարցուց ինկանը։—Աղջիկը ինչպէս է, ինչ։

—Ինչպէս որ գնացիր, ձայն—ձուն չկայ, կը քնի։

Փոթ եկաւ, կանչեց ականջն ի վայր։—Աղջիկս, վեր կաց. քեզ համար տեսակ—տեսակ դոյնզդոյն ծաղիկ եմ բերած, ելի՛ր, հոտ քաշէ։

Փոթ տաս տեսակ ծաղիկ քաղած էր, տուեց իւր աղջկան որ հոտ քաշէ։

Աղջիկը ձեռ ձգեց, առաւ, հոտոտեց։ Երբ հոտոտեց, բոլորովին առողջացաւ, ելաւ նստաւ։ Ոտքի կանգնեցաւ, անմիջապէս վազեց գնաց իւր մօր օգնելու։

Անցաւ քանի օր, աղջիկը դարձաւ մի աշխատաւոր տանտիկին. նա շուտ մի սովորեց ամեն բան։—Ջուր կը բերէր, կաթ կը տաքացնէր, բուրթ կը մանէր, վրան ու գորգ կը գործէր, հաց կը թխէր, լուացք կանէր. իսկ մայրն նստած տունը հանգիստ, միայն իւր աղջկան խրատներ կտար և կաղօթէր Աստուծոյ։

Աղջիկը թէև առողջացաւ. բայց դեռ գլուխը նեխած՝ կը հոտէր, երբ արեգական ճառագայթները տաքացնէին. նոյնպէս երեսի աչքերու մէջ դեռ արատ ունէր. որով կատարեալ գեղեցիկ չէր։

## Ը.

## Գեղեցկագոյն Սեռեր

Փոթ հաց ուտելէն վերջ ինչ որ փշրանք—մշրանք կաւելանար, տանէր Մուղուրայ ջրի ակի լճակը կը լեցնէր։ Այդ լճակի մէջ Մէրճան ձկներ կային, կգային այդ թափած հացը կուտէին։



Մի գիշեր դարձեալ Փոթ երազ տեսաւ։—Փո՛թ, դու քո աղջկան համար հոգ կանես, դնա այն ձկներու թագաւորին հարցուր, որուն դու հաց կուտաս, նա քո աղջկան համար մի դարման կարող է անել։

Առաւօտեան շուտ Փոթ լիք լցեց մի դոգնոց հաց, տարաւ լցեց ջրի ակը, ձկներ հաւաքուեցան, կերան, իսկ ձկանց թագաւորն եկաւ Փոթի յանդիման կանգնեցաւ։—Ի՞նչ է, Փո՛թ, ասաց։—Շատ կը խնդրեմ, Մէրճան թագաւոր, ասաց, ինձ մի աղջիկ կայ, քեզ յայտնի է։

—Գնա՛ այսօր, վաղ առաւօտեան արի՛, ասաց ձուկն։

Հետևեալ առաւօտուն Փոթ գնաց, ձուկն ալիքներ բարձրացնելով եկաւ. գլուխը ջրի եզրը հանեց, հազաց։ Երբ հազաց մի օխանոց ձուկ բերնէն դուրս ընկաւ. ասաց։

—Փո՛թ, ահա իմ թշնամին, որ քո աղջկայ գլուխը պիտի առողջացնէ։—Այս ևս քո ցեղէն է, ինչպէս թէ քո թշնամին է։

—Այո՛, դա թէև իմ ցեղէն է. բայց իմ ձագերու պաշարը կը յափշտակէր, քո բերած փշրանքէն թոյլ չէր տար որ իմ ձագերս ևս ուտէին. թող որ փշրանքներն կը խլէր, այլ ձագերս ևս կուլ կտար։ Ասաց, սորա լեղին կը հանես. կը քսես աղջկանդ աչքը, կը բացուի, Մէրճան լոյսը կը յայտնուի, կաշին ևս կը քերթեն, հանես, եղն կը քսես աղջկանդ երեսն և գլուխը, կաշին կը փաթութես գլուխն և երեսը։

Փոթն է, գնաց, ձկան պատուէրը կատարեց, փաթաթեց։

Քսան և չորս ժամ անցաւ, գնաց վերևի շորերը մի կողմ քաշեց։—Զաւակս, վեր կաց, բաւական է քնիս։

Աղջիկը կանգնեցաւ, Փոթ տեսաւ որ գլուխն ու աչքերը առողջացած են, նայեց որ աչքի արիւնը անհետացած է, բիբը Մէրճանի նման վայլ կտայ։

Աղջիկը նայեցաւ երկինք, աչքը այնչափ լուսաւոր էր որ ամրան կէս աւուր արեգակին երկնքի աստղեր ամբողջովին կերևան։—Դեռ կէս օր է, որդի՛, ասաց, վառք քեզ Աստուած, ամառուան շոգ մինչոցի՞ն ևս աստղ երևայ, շատ բան է։

Հայրը տեսաւ աղջկան երեսները պուտ—պուտ, կարծես փայլուն բուստով նշշուած ու զարդարուած է, աչքերն դեղեցիկ կը փայլին, իւր հօր աչքերուն երբ կը նայէր, որպէս արեգական ճառագայթ կը թափանցեր հօր աչքերուն մէջ, հայրը կամաչէր, նորա աչքերու մէջ համարձակ չէր կարող նայիլ:

## Թ.

## Սեռեւ հովուուհի կը լինի

Աղջիկն որպէս մօրը կօգնէր, այնպէս եւ սկսաւ հօր օգնել, հօր գործերը շատ անգամ ձեռքէն կը խլէր, ինք կանէր.—Հայրի՛կ, ասաց օր մի, ես կուզեմ հովիւ լինել, խնդրեմ, ինձ համար դնէ հովուական զգեստ:

—Աղջի՛կս, ասաց մայրն ուրախանալով, դուլպատ գործած եմ, վերեւէն հագնելու շալն եւ պատրաստ.է:

—Որդի՛ս, ասաց հայրն, դու նախ գորգ ու կարպետ գործէ, կաց մօրդ մօտ, թել մանէ, տնական ամէն բան սովորէ, ապա հովիւ լինելու ցանկութիւն յայտնէ:

Մայրը ասաց.—Մարդ, ի՞նչ կարդիլես, աղջիկս փափագունի՛ հովիւ լինելու, նա արդէն տնական բաներն շատ շուտ սովորեցաւ, ահա՛, ինչ որ այս տեղ կը տեսնես, նա գործած է:

Մեղկերտու քաղաքը Մուզուրայ գլխէն վեց ժամ էր, Փօթ գնաց այն քաղաքն, աղջկան ինչ որ պէտք էր, գնեց ու բերեց:

Աղջիկն հագաւ հովուական շորերն, բիրն ու սրինգն առաւ իւր ձեռք, անցաւ հօտի առաջ, Փօթն եւ հետեւեցաւ աղջկան, հրահանգներ տուեց, սովորեցոյց հովուական գործերը, մանաւանդ սրինգ ածելն: Ցանձնեց նմա իւր երկու Պառտս ու Պառաղ անունով շներն:—Որդի՛, ասաց, քեզ կը վայելէ այս շներն, սոքա են որ քեզ և քո հօտը պիտի պահպանեն, ամբողջ հօտը մի կողմ, այդ շներն մի կողմ:

Աղջիկը մի քանի անգամ սրինգ ածեց, սովորեցաւ, մագիներն հետեւեցան նմա:



—Ա՛ղջիկս, ասաց Փօթ, լաւ ուշ դիր, այսօր է, այլ ևս չեմ գար քո հետ, ինչ որ պիտի սովորես, սովորէ՛:

Առաւ սրինգն ու սկսաւ ածել որ հօտը յետ դարձնէ. բայց չդարձաւ, աղջիկն առաւ, ածեց. ամբողջ հօտը յետ դարձաւ, սկսաւ գնալ աղջկան ետեւէն:—Որդի՛, ասաց, ես այլևս հոգ չունիմ, դու քան զիս լաւ կածես:

Աղջիկը շարունակեց քաղցրաձայն ածել, ի վերուստ նմա տրուած էր այդ շնորհքը. այնչափ քաղցր կածէր որ քարերը կը գլորուէին, ծառերու ծայրերն դեպին խոնարհած էին, կուզէին արմատախիլ լինիլ, հովուհուն հետ գնալ, ջրերը կանգ առած՝ կը լսէին, հաւքեր նորա գլխու վերայ կը թռչէին խումբ—խումբ, այնպէս որ արեգակի լոյսն քռնած էին:

Այս ամէնը տեսաւ Փօթ, ասաց:—Որդի՛, դու այլ ևս վարժուած ես, քեզ կը վայելէ այս ամէնը:

Հօրս եղջիւրով մի խոյ կար, որ միշտ աղջկան հետ կերթար, մսխախը ձգեց նորա վերան, ինքն ևս երբ հաւաքել կուզէր հօտը,—«հա՛ Պառտէ, հա՛, Պառաղ», ասելուն, շները կը հաւաքէին:

Այս շները հայր Աբրահամու շան ցեղէն էին, որոյ համար ամէն բան կը հասկանային և շատ հաւատարիմ էին:

Աղջիկը հետևեալ օր իւր հօր ասաց:—Դու այլ ևս գնա տուն, վրանը բարձէք՝ տակաւ առ տակաւ մօտեցէք ինձ:

Իսկ ինքն անցաւ հօտի առաջ, սրինգն դրեց բերանին, ածելով գնաց հասաւ Ծառդովիկ:

Փօթ վրանը բարձաւ, հետևեցաւ իւր աղջկան, գնաց, Մուզուրայ ջրի եզրը կանգնեց:

## Ժ.

## Սեռեւ կը մկրտուի

Հայր ու մայրը ուրախ էին որ այսպէս աշխատաւոր աղջիկ ունին:— Կնիկ, ասաց Փօթ, շատ լաւ, մեր աղջիկն հովիւ արինք. մինչոց մի ասացինք անդամալոյծ է, կը մեռնի, չմկրտեցինք, այժմ բերենք, մկրտենք, անուն դնենք:

Բերին հօտը յանձնեցին Պօռտէին ու Պառապին, առին աղջիկն ու գնացին Մեղկերտ: Քահանան տեսաւ որ աղջիկն երբ կը լսէր, ատամներն սատակի նման կը փայլէր, մկրտեց, անունը Սեռա դրեց:

Նոյն երեկոյին հասան իւրեանց վրանը, առաւօտեան Սեռա հովիկ սրինգն սկսաւ անուշ—անուշ ածել ու գնալ, հօտն ալ իւր հետ, բարձրացաւ Մուղուրայ լեռը:

Վրաններ ու հօտեր Մուղուրայ լեռան շուրջը բազմացած էին, Սեռա հովիկի հօտը սովոր էր խոտոտ մարգագետին արածել, որով այս վայրս չէին յագենար, մինչը դրեց որ իւր տեղը փոխէ: Սեռա հովիկ հօտն բերեց, երեկոյին մայրն ասաց:

—Սեռա, մեր մագլնեներուն ինչ եղած է, առատ կաթ չեն տար, կամ ծարաւ թողած ես, կամ անօթի:

—Վրաններ ու հօտեր խառացած են, մեր հօտն կուշտ չուտեր, առաւօտեան ուղղակի Հաւլորու լեռան կողմ կը տանեմ, դուք ալ վրանը բարձէք, ինձ հետևեցէք:



## ԺԱ.

## Լուսիկ կը սիրահարի

Սեռա հովիկ առաւօտ վաղ զարթեցաւ, հայրիկը դրեց իւր մահահը, կապեց չորս եղջերաւոր խոյին վերայ, սրինգն ալ դրեց բերանը, հօտը քաշեց, գնաց լեռը:

Հայրն ու մայրը վրանը բարձան, տարին Հաւլորու լեռան ստորոտը ու կանգնեցին: Ցեռան այն տեղ ամէն տեսակ կաթնատու խոտեր շատ կան հօտի համար. իսկ իրենց համար ալ զանազան բանջարեղէններ—բազուկ, սոխ, սխտոր ալն. ինքն իրեն բուսած՝ աճած են:

Սեռա հովիկ մի ամիս մնաց, մի օր—համբարձման շաբթուն մէջ հօտը բերաւ վրանի մօտ, մօրն ասաց:—Մայրիկ, Հաւլորու լեռնէն ծաղիկներ հաւաքած, փունջ կապած եմ ու հետս բերած, այլոց աղջիկներ վաղը կը գան վիճակ հանելու. ես ալ կուզեմ նրանց հետ գնալ և խաղալ, առաւօտեան ալ հայրիկս թող գնայ հօտի հետ:



Մայրը երեկոյին ասաց Փօթին:—Այ մարդ. առաւօտ վիճակ է. հօտը դու տար. Սեռա շատ կը ցանկայ մեր դրացի աղջկանց հետ գնալ, վիճակ հանել:

—Կին դու, ինչ կասես, թող գնայ խաղայ, ի՞նչ մէկ աղջիկ մեր Սեռաէն լաւ է, ո՞վ նրան բան կասէ:

Սեռա հովիկ առաւօտեան շուտ ելաւ, հօտը արձակեց:—Հայրիկ. ասաց. եթէ հօտը իրարմէ բաժանուի, հեռանայ, դու ձայն ձգէ. ես սրինգն կը փչեմ, կը հաւաքեմ:

Սեռա գնաց աղջիկներու հետ վիճակ շինելու. Փօթն ալ փոքը ինչ գնաց հօտի հետ, ապա քունը տարաւ. լեռան գլուխը քնեցաւ, երբէք չէր գիտէր թէ հօտն ո՞ւր գնաց, ինչ եղաւ:

Փօթ այդ տեղ թող քնի, Սեռան ալ վիճակ շինէ. մենք դառնանք Բերդակի թագաւորի որդւոյն, որ երիտասարդ է, քառասուն երիտասարդ ալ իւր հասակին, իւր դէմքին համեմատ, իւր հագուստի նման շորեր հագցուցած ծառաներ ունէր. հայրը մեռած էր, այս—Լուսիկ նստած էր հօր աթոռի վերայ. կը կառավարէր երկիրն.

Լուսիկ թագաւորը ուր որ գնար, ծառաներն իրեն առջև բարև կը բռնէին, կը կանգնէին. նորա հրամաններն անթերի կը կատարէին: Իսկ երբ ոտի կանգնէր, կամ ձի նստեր, ոչ ոք չէր ճանաչէր թէ ո՞ր մէկն է թագաւորը, վասն զի ձիանք ալ միատեսակ էին. թրերը, վահաններն և նիզակներն ալ միանման էին, ծառայ և թագաւոր կանանչ կարմիր մետաքսով էին զգեստաւորուած. ո՞վ և տեսնէր սիրահարելով կը սիրահարիր:

Լուսիկ թագաւորի շուրջը պատած էին մի օր նորա քառասուն ծառայք, ինք գահի վերան բազմած՝ երբ հրամաններ կարձակէր, մի ծերունի ներս մտաւ. թագաւորի առաջանը կանգնեցաւ:

Լուսիկ թագաւոր քանի անգամ տեսած էր այս ծերունւոյն, հրամայեց նստիլ: Ծերունին մի կողմից սկսաւ նստելու պատրաստուել, միւս կողմից ասաց.—Թագաւորն ապրած. քո հօր երեսակը շատ եմ տեսած, քառասուն տարի ծառայած եմ նորան, տաս տարի Եվրատ գետէն

Ջուր բերած, տուրք հաւաքած եմ, հօրդ առաջ քառասուն տարի ես վազիր եմ եղած. որով մարդ չկայ որ քո թագաւորութեան սահմանները ինձ պէս ճանաչէ, քո գանձարանի եւ մուտքը գիտնայ. արդ իմ օրերս կարճ են, կուզեմ վերջին ծառայութիւնս ես մատուցանել որպէս զի պարտաւոր չմնանեմ գերեզման:

Մի շաբաթ վազիրը մնաց թագաւորի մօտ, ինչ որ գիտէր, ինչ որ թագաւորին գիտնալ պէտք էր, միառմի սովորեցուց. ապա մի երկուշաբթի օր հեծան ձիանքը, ձիաւորներու կէսն առջեւէն, կէսն ետեւէն, վազիրն ու թագաւորը ես մէջտեղէն, ճանապարհ ընկան և գնացին: Թիլն բերդէն ուղղուեցան Մուրատ գետի ձախ ափն իջեր, հասան, մինչև Մունին—օլրուկը. անցան—գնացին Փերինայ ու Մուզուրայ Ջրի խառնուած վայրն, ուսոի անցան Խուշ—Խափինին կամուրջը, ասոի Սրճովու կամուրջը և բարձրացան Մուզուրայ աղբիւրի ական վերայ. Այս տեղ բաւական միջոց հանգուցացան: Ճանապարհ ընկան, Ծառ—գովիկայ ետեւէն անցան Խոզաթէն երկաբացող ճոթը ճանապարհի միացած վայրն, ուսոի ինքն Աղսուլի Ջրի վերայ, ուղղուեցան դէպ ի խոնարհ, հասան մինչև Աղսուլի [1]) կամուրջը:

Վազիրը ամէն սահմանները ցոյց տուեց, դարձան տուն:

Լուսիկ թագաւոր դիշերը պարկաւ, քունը չտարաւ, երեք օր, երեք դիշեր անհանգիստ եղաւ, յետ երեք աւուրց փոքր ինչ քուն մտաւ. քնոյ մէջ երազ տեսաւ.—«Այն աղջիկը որ դու սպանեցիր, քո դլխուն դրած ենք, նա է քո նշանածն, նորան պիտի առնես»: Դարձեալ քնեցաւ, դարձեալ նոյն երազը տեսաւ. դարձեալ քնեցաւ, դարձեալ տեսաւ, դարձեալ քնեցաւ, դարձեալ տեսաւ:

Առաւօտեան վեր կանգնեցաւ, ձիանք ու ձիաւորներ սարքեց, ասաց ինքն իրեն:—Այս ինչ երազ, ինչ բան է, չէ՞ ես սպանեցի զայն, դնամ, մի անդամ տեսնեմ, կենդանի՞ է արդեօք:

[1]) Այս ջուրն մի ժամ խոնարհ կը խառնուի Մուրատի:



Բերդակէն Փոթի եղած վրանները երկու աւուր ճանապարհէր, գնացին այն տեղ հասան, Փոթ, վրան, բան չգտան, ահա, այս տեղ կը լինի, այն տեղ կը լինի ասելով լեռներու մէջ երկար դեգերեցաւ, չգտաւ: Բուն համբարձման օրն էր, ուղղուեցան Հաւլորու լեռն, եկան—ելան գուրս. ինչ տեսան,—հարիւր աղջիկ հաւաքուած են մի վայր, փարչը ծաղկեցուցած՝ իրենց մէջ դրած են. վիճակի խաղեր կասեն, իւրաքանչիւր ասելուն մի—մի ծաղիկ կը հանեն: Լուսիկ թագաւոր տակաւ առ տակաւ կը մօտենայ դէպի աղջիկներուն որպէս զի լսէ թէ աղջիկներն ինչ կերգեն:

Մի առ մի ամէն մէկ երգողն երեսը կը նայէր, կարգը եկաւ մի աղջիկան, ինչ աղջիկ—երբ նայելու լինիր, աչքերը բուստի պէս կը փայլփլէր, երբ նա ծիծաղէր ատամները սատափի նման փայլ կտար որպէս ադամանդ: Երկու քայլ յառաջ գնաց, որ ուշադրութեամբ դիտէ, բայց տես յանկարծ ինչ եղաւ—ուշաթափ գետին ընկաւ:

Այդ տեղ հարիւր աղջիկ կային, հարիւրն ես սառեցան մնացին, երկիւղը զիրենք պատեց, չէին գիտեր, ինչ անեն:

Հայ արեգ սիրեմ Սեռաւ,—ինչ արաւ Սեռաւ.—Ջրի թասն զարկեց աղբիւրի ական մէջ, թաս մի սառը ջուր լցեց Լուսիկ թագաւորի վերան, ասաց.—այ տնաշէն աղջիկներ, ինչ կանէք, կժով ջո՛ւր բերէք: Աղջիկներ կժով ջուր բերին, իսկ Սեռաւ հովիկ լցեց թագաւոր Լուսիկի սրանն, ձեռքէն բռնեց, քաշեց նստեցուց.

Լուսիկ զգաստացաւ, բայց այժմ Սեռաւի ձեռքը պինդ իւր ձեռաց մէջ սեղմած է, թոյլ չտար:

Թագաւորի մարդիկ որք շուարած կանգնած էին, նոր ուշքի եկան, զԼուսիկ առին իւրեանց ձեռներու վերան, տարին վրան մի:

Թագաւորի մարդոց ու ծերունու մէջ փսփսուկ մի ընկաւ: Փոթ հարցուց:—Այդ ինչ փսփսուկ է, մի՞թէ գաղտնի բան կայ:

Ծերունին ասաց:—Այո՛, գաղտնիք կայ:

—Արդեօք չէ կարելի ինձ ես յայտնէք:

—Այո՛, անմիջապէս. կը տեսնես մեր թագաւորն ինչ

վեճակի մէջ է. արի՛, Աստուծոյ կամքով քո աղջիկը մեր Թագաւորին տուր։

—Ծերունի բաբա՛, ասաց, որ ձեր Թագաւորը կուզէ, ինչ պիտի ասեմ։

Ծերունին Փոթէն խօսք առաւ, բայց իւրեանց մօտ նշան գնելու մի բան չգտնուելուն՝ մետաքսեայ մի կարմիր փուշի կաբ, զայն նշան դրին։

Խօսք առն ու նշան գնելը հաստատուն լինելու համար ծերունին մի փոքրիկ հացկերոյթ սարքեց. ասաց,—Արև բաբի է. ձիւն և ոտաբ հով չկայ. մոլթեցէք հինգ հաբիւր հաւ, պատրաստեցէք առատ հալվա, քաթա. գորգերը փռեցէք Սոխի ու Սխտորի լեռան մաբգագետնոյն վերան, ուր ուտենք, խմենք, նշանն օրհնենք ու գնանք։

Ամեն պատրաստութիւն տեսնուեցաւ. Փոթի կինն երկու հաւ ու երկու հաց մանրեց. յղեց, իւրաքանչիւր վրանի մէջ մաս մաս բաժանել տուեց. ապա հաւաքուեցան, կերան, խմեցին։

Նոյն գիշեր քնեցան, հաւախօսին Փոթ ելաւ, տասներկու տաւար և քսան և չորս գառ մորթեց. եփեցին, պատրաստեցին, վրանաբնակներն հրաւիրեցին, եկան Փոթի վրանի առաջ փռուած գորգերու վերան շարէշար նստան, աշխատաւորը եփած միսն մանրեցին, իւրաքանչիւր անձի առաջ մի մի ման կերակուր դրին, կերան, հացը օրհնեցին, ելան գնացին վրան։

Թագաւորը հանեց մի երեքնոց սոկի խրեց մի խնձորի վերան, տանտիկնոջ սաչու տուեց։

Այդ վայրը 500 վրան կար, այդ օր Թագաւորն իւր քառասուն ձիաւորներով այդ վրաններն ամբողջ շրջեցաւ։ Իսկ երբ վրաններու արած այցելութենէ յետ դարձաւ, տեսաւ 500 աղջիկ պար բռնած՝ երգ կասեն ու կը խազան.

Հաւն ու հալվան կերանք Սխտորին լեռը,
Օսկի կամար կապեցինք Սեաև հովիկին մէջը,
Կախեցինք ականջը քարերը Թանկագին,
Ժամանակ որոշեցինք հինգ տարի Սեաև հովիկին,
Սեաևին հասակով մարմար քար կտրեցինք,



Լուսիկ Թագաւորի անունը մէջը գրեցինք։
Սեաևի ոտաց կոշիկներ կը հանենք,
Հարսնուորն որ եկաւ, ջզմա կը հագցնենք,
Սուրբ Տիկնայ առաջ մոմ կը վառենք՝
Խունկ ու մոմ անուշ անուշ կը ծխենք՝
Լուսիկ Թագաւորի հասակով մարմար կը կտրենք,
Սեաևի անուն մէջը Թագուհի կը գրենք։

---

## ԺԲ.

## Լուսիկի վտանգաւոր ճանապարհորդութիւնը

Լուսիկ Թագաւոր դարձաւ տուն, բայց ուշը—միտքը Սեաև հովիկին դարձուցած էր, չէր կարող իւր գահին վերայ հաստատ նստիլ, համբերել. մի ամսոյ չափ մնաց, մտադիր եղաւ դարձեալ գնալ, տեսնել, բայց ամօթ կը համարէր այդպէս շուտ և ընկերով գնալ, այլ իւր ծերունի վարպետը կարգադրեց որ երկիրը կառավարէ, իւր Թիկնապահներն ևս յղեց Քավէյու լեռն, որ այծեամ որսան, ինքը Քավէյու լեռնէն իւր ճանապարհը շեղեց։—Դուք ուղղակի անտառին խորը գնացէք, ես կգամ, կը հասնեմ ձեզ, ասաց։

Լուսիկ Թագաւոր չհետաքրքրեցաւ իւր ձիաւորներուն, այլ Զուլեկայ լեռն իրեն նշան բռնեց, գնաց դէպի Զուլեկ, ուստի կարողանայ նշմարել Փոթի վրանատեղին։ Դեռ Զուլեկ չհասած՝ ճանապարհը կորսցաւ, բարեբաղդաբար մի վրան տեսաւ. գնաց վրանն և հարցուց։

—Դէպի Զուլեկ Ծառգովիկի վերևէ՞ն թէ ներքևէն գնամ, որը մօտ է։

—Ներքևէն գնաս մօտ է, ասաց վրանի տէրն. սակայն ջուրը անցք չտար. իսկ եթէ վերևէն գնաս, ճանապարհդ կերկարի երեք—չորս օր, եթէ մէջէն ճանապարհը բռնես, շատ մօտ է. բայց խիստ դժուար է, ծառերն այնչափ խիտ են որ ձին չէ կարող մէջից անցնիլ։

—Մախաղը հաց լից, ասաց. տեսնենք Աստուած ինչ կը յաջողէ։

Մախաղը կապեց ձիու վերան, հեծաւ ու գնաց, փոքր մի-ջոցէն հասաւ երեք ճանապարհներ բաժանուած վայրը, կանգ առաւ, մտածեց—մտածեց, ապա զձին ազատեցրեց, ուղեց քշել ներքին ճանապարհով, ձին չգնաց. վերին ճանապարհով քշեց, դարձեալ չգնաց. Թոյլ տուեց ձիու ասնձն, ձին ուղղուեցաւ, միջին ճանապարհով գնաց: Այս ճանապարհը խիստ նեղ ու խորտ ու բորտ էր, դժուարութեամբ գնաց—հասաւ անտառի եզրը, կանգ առաւ, որչափ քշեց, առաջ չգնաց:

Հանեց ծխատամբակը, ծխախոտը լցուց, կայծքարով աբէդը վառեց ու դրաւ ծխախոտի վերան, մի խոր շունչ քաշեց, որպէս զի միջոց ունենայ մտածելու թէ ինչ անելու է: Թոյլ տուեց ձին—ձիու կամքով պիտի գնամ, ասաց: Բայց ձին գնաց խիտ ծառներու մէջ կանգ առաւ. Թագաւորը ազատեցրեց, ձին այս ու այն կողմ ցաթիտեց, որ ճանապարհ գտնէ, չգտաւ, Թագաւորը զայրացած գոռաց:

—Այ անխոհեմ ձի, զիս այս տեղ բերիր, որ կորանցնեմ:

Ձին էր մի հնար գտաւ, սողոսկելով անցաւ, մի այլ տեղ ևս այսպէս և վերջապէս մի աղբիւրի վերան կանգ առին.—սոված եմ, մտածեց. հաց ուտեմ, ապա հնար մտածեմ: Տեսաւ աղբիւրի առաջ մի մերկ, մաղոտ մարդ, ջուր խմեց, առանց յետև դառնալու. առանց Թագաւորը տեսնելու անցաւ, գնաց անտառին խորը:

Թագաւորը Լուսիկն իր ձին ջրեց, ինքն ևս նստաւ որ հաց պիտի ուտէր, տեսաւ նաև մի մաղոտ մերկ պատանի իւր գլխաց կանգնեցաւ: Թագաւորը մի քիչ հաց տուեց. վայրենին թողուց գնաց. քիչ մի մնաց, մի հատ ևս եկաւ, նմա ևս տուեց, ապա հետզհետէ 5—6 հատ եկան, նրանք ևս հաց առին, գնացին, փոքր ինչ վերջ մի վի՛շտապաձև կին եկաւ, Թագաւոր Թուրը բարձրացուց որ զարնէր, երկիւղ կրեց թէ զինք ուտէր:

Այդ վիթխարի, այլատեսիլ ահռելի կինն իւր ծծերը ուսէն ետև ձգած էր, որ ետևէն կախ ընկած էր ազդրներու վերայ: Համբերեց Թագաւորը. տեսաւ որ իւր դէմ կանգնեցաւ, դարձեալ ևս հաց տուեց, այդ ևս գնաց: Կինը գնալու պէս եկաւ նախկին աղբիւրի վերան ջուր խմող մաղոտ մարդն, որի մօրուքը ծնկներն իջած էր, բեխերն ևս ետևն հանդուցած, երկու թիզ ևս հանգուցեալն դուրս տնկուած էր: Նորան դաթա տուեց, այդ ևս գնաց:



Թագաւորը տեսաւ որ այս վայրենիներու վերջ չկար, շուտ կանգնեցաւ, հացի մախաղն ձիուն վերայ կապեց, ինքն ևս հեծաւ, պիտի գնար, յանկարծ տեսաւ չորս հատ անտառի մարդ, ծառներն արմատէն խլելով ջրինդի նման թագաւորին կը ձգէին: Անհաշիւ ծառներ ձգեցին Թագաւորի դէմ, Թագաւորը իւր ձիով մնաց ծառներու ներքև մի դուռ տեղ: Որոցմէ մին մի մեծ սալ քար առաւ, բերեց որ ձգէ Թագաւորին ու ձիուն վերայ: Թագաւորն է՝ զգաստացաւ, կայծակի թուրը քաշեց, ձգեց, երբ ձգեց, մարդն ու քարը միատեղ կտրեց:

Այդ անտառաբնակներուն ոչ թնդանօթ, ոչ հրացանի գնդակ, և ոչ թուր կազդէ, այլ միմիայն կայծակի թրով երբ հարուած տաս, կազդէ և կը մեռնի, ապա թէ ոչ նրանց մեռնիլ չկայ:

Լուսիկ Թագաւոր այդ մէկին երբ կայծակի թրով հարուած տուեց, միւսներն ահռելի գոռգոռոցմէ անտառի մէջ ձգեցին, այդ գոռում գոչումի վերան իւրաքանչիւր ծառի հաշուով և իւրաքանչիւր ծառի մօտ մի մի անտառի մարդ երևան եկան, չորս կողմէն հաւաքուեցան Թագաւորը շրջապատեցին:

Թագաւորն է, հարիւրին մի թուր կը ձգէր, հինգ հարիւրին մի հարուած կտար, հազարն մի թրով գետին կը տապալէր. Թուրը ձեռքն առ և ձախ հարուած կտար, այնպէս որ դիակի քանի բլուրներ կազմուեցաւ, արիւնը հեղեղ դարձաւ, քար, ծառ և դիակ քշեց տարաւ: Իսկ նախկին անտառի մարդը երևան եկաւ, մի սարսափելի գոռոց արձակեց, որոյ ձայնի արձագանդէն բոլոր աշխարհ սարսեցաւ: Իւր մարդոց որն մեռած էր՝ մեռաւ. իսկ միւսներն որքնոր նոր խմբեր կազմած Լուսիկ Թագաւորի վերայ յարձակում անելու մեծ պատրաստութեան մէջ կը գտնուէին, այդ ձայնէն սարսեցան, յետ քաշուեցան իւրեանց տեղերն, ամէն մէկը մի կողմ գնացին, կորան: Այդ մաղոտ մարդը նշանա-

ցի յայտնեց Թագաւորին թէ երեն առաջնորդելու է, ընկաւ նորա առաջ, Թագաւորը հետևեցաւ նորա, մի աւուր ճանապարհ մինչև Մուղուրայ Ջրի վերայ անվտանգ հասուց ու դարձաւ:

Թագաւորը մինչև այդ տեղ թուրը մերկ ձեռքը բռնած էր, Մուղուրայ Ջրի վերան լուաց, արիւնը մաքրեց, դրաւ պատեանն, (եթէ արիւնոտ պատեանը դնէր այլ ևս չէր կարող դուրս քաշել) նստաւ, հաց կերաւ, ելաւ, ուղղուեցաւ Հաւլորու լեռը:

Թագաւորն է, լուր շրջած և ծանօթ տեղերն է, տեսաւ, մի ամիս առաջ այդ տեղ վրաններ կային, այժմ ոչինչ չկայ, այս—այն կողմ շրջեցաւ, այս ու այն դարի ետևն որոնեց, վերին ներքին բլուրներից դիտեց, աջ ու ձախ ձորերն զննեց, հովտի զառիվերն ու զառիվայրը վազեց, ոչ վրան կայ և ոչ մարդ:

Ցանկարծ լուր դէմը մի պառաւ կանգնեցաւ, ձեռքը յետին կապած կը գնար աղբիւրի վերան:—Կանգնի, պառաւ, ասաց, քեզ բան ունիմ հարցնելու: Պառաւը կանգ առաւ, Թագաւորն ասաց:

—Աչքերը մէրճան, ինքը Սեռև, երեկ այս տեղ՝ այսօր ուր են:

Պառաւը երեսը դարձոյց Թագաւորին ու ասաց,

—Բերանդ շաքար, լեղուդ քաղցր, Սեռևի թշնամին շատ է, երեկ այս տեղ էին, իսկ այս գիշեր Տէրօվան չուեցին:

—Պառաւ, ինչ կար, մինթէ այս տեղ լաւ չէ՞ր:

—Այն տեղ խոտն առատ է, ձին երբ մարդադեռնոյն մէջ մանէ, այլ ևս չերևիր, ես ևս այն տեղ տասն երկու եղբայր ունիմ, և եօթ որդի, մի հատ ևս տէր տէր, որ չեմ հաշուեր:

Լուսիկ Թագաւորը բռնեց Տէր—Օվանի ճանապարհը, գնաց. երկար բարակ գնալէ վերջ մի ձորու բերան հասած՝ չհասած՝ տեսաւ հանդէպի դարից մի հովիւ դարիվար գլորուելով կգայ և դարձեալ կը բարձրանայ դարի վերան ու նոյն ձևով գլորուի ու կգայ և այսպէս շարունակ, այնպէս որ ոտ ու գլուխ ջարդած՝ արիւնաթաթախ եղած՝ դեռ չէր դադրիր:



Լուսիկ ձին քշեց, ձորն անցաւ, հովիւը գլորուելով ընկաւ ձիու առաջ, ձին խրտնեցաւ, տնկուաւ լեռան կողն ի վեր: Իսկ հովիւն ևս կանգնեցաւ ու փախաւ:

—Կանգնէ, հովիւ, կանգնէ, ձայն տուեց Թագաւորը:

Հովիւը կանգնեցաւ, խելագարի նման նայեցաւ ձիաւորին: Թագաւորն ասաց:—Աչքերը մէրճան, ատամները սեռև, եկաւ անցաւ, տեսաւ:

—Ա՛խ—ա՛խ, աղա, աղբիւրին վերայ տեսայ. ոսկի բաժակով ջուր տուեց, խելքս գնաց, աչքերս մթնեց, ոտքերս ու ձեռներս թուլցան, հօտս ևս Ծառ—Գովիկ թոյլ տուեցի:

—Ա՜յ հովիւ եղբայր, դու որ Սուրբ Տիկին կը հաւատաս, արդարը խոստովանէ. աչքերը մէրճան ինքը Սեռև, եկաւ, անցաւ:

Այ աչքդ սիրեմ, հովի՛ւ, հովիւը պարզեց:

—Նարինջ ձինը հեծած՝ ոսկի կամարը կապած. կարմիր փուշին գլխին ձգած՝ ադամանդեայ օղերն ականջն ի վայր կախած՝ գլխի երկայն ծամեր մէջքի վերան փռուած՝ ծամերու ծայրերը գետին առած՝ արեգակի նման փայլ կտար. սորա համար մի աւուր ճանապարհ հետևեցայ նորան, բայց նա յետ չնայեց, որով խելացնոր եղած կը գլորուեմ:

Թագաւորը հառաչանք մի քաշեց. զայրացաւ՝ թուրը մերկացուց որ հովուին հարուած մի տայ. նորա կեանքը վերջացնէ, ապա մտածեց,—Գեղեցիկին վերայ ամեն մարդ ևս սէր կը ձգէ. ետևէն կը գնայ: Ձին քշեց, գնաց—հասաւ Տէր—Օվանի տափարակն. նա ընկղմած էր մտածման մէջ, չէր գիտէր ուր կերթայ ձին:

Ձին ծարաւ էր, ուղղուեցաւ մի աղբիւր, որ ջուր խմէ. իրեն ևս միտքն ընկաւ ջուր. զի Սեռևի վերան ունեցած սէրը ևս լուր չերմութիւնը բորբոքեցուցած և ծարաւը սաստկացուցած էր. տեսաւ այդ տեղ կամարակապ աղբիւր մի կայ. ինչաւ որ ջուր խմէ . . . Տեսաւ աղբիւրի առաջ սևագէմ պառաւ մի, որ գլուխ ու երեսն ևս սև կտաւ փաթաթած՝ աղբիւրի ակն վերայ պուպուզած նստած էր, ասաց:

—Ո՞ւռան կգաս, գեղեցիկ տղա՛յ, դիտեմ, Հաւլորու

լեռնէն է դալդ, Սեւեռ հովիկդ փախուցին, ի զուր մի տանջուիր, կարմիրն ու սեւի մէջ տարբերութիւն մի՛ դներ, ասի՛, զիս ա՛ռ։

Թագաւորն ասաց։—Ահա դեղեցիկ աղջիկ, քեզ ևս նըշան կը դնեմ, կառնեմ, ոտաց ճանապարհին դռնապան կը շինեմ։

—Գեղեցիկ Թագաւոր, փոքր էի շաքար շատ կերայ, ատամներուս մէջ որդ ընկաւ, ոեւացաւ, Թափաւ, տարիս այժմ տասն եօթը հասած է, ասի՛ զիս ա՛ռ, ով աչքիս լոյսը, սիրուն տղայ, քեզ համար դորդ կը գործեմ։

—Ո՛վ դեղեցիկ աղջիկ, այս աղբիւրին վերայ բարի բան չպատահիր. հինգ մատդ մի չափ չլինիր, սերկեւիլի ծառի վերան նուռ չաճիր, սեւ ագռաւը ոսկեայ վանդակի մէջ սոխակ չլինիր, ինչ է օգոստոսի շան պէս՝ աղբիւրի ակը մտած ես, ձիս ևս չուզեր տեսնել քս սեւ երես։

Ջուր ևս չխմեց, ձիու սանձը քաշեց, ձին դարձուց, քշեց, գնաց։

Շատ ու քիչ գնաց Աստուած գիտէ, տեսաւ արևմտեան կողմը սեւ ամպ մի երևաց. տարածուելով Թանձրացաւ, սկսաւ կայծակներ արձակել, երկինք որոտալ, գետին արձագանգ տալ, սոխի գլխի մեծութեամբ կարկուտ տեղալ վերևէն, խիստ քամին առջևէն յետ մղել։

Թագաւոր ինչ արաւ,—իւր զավուդը տարածեց ձիուն վերայ, ինք կըծկուեցաւ մէջը, այդ վիճակի մէջ մի ժամ քշեց, առանց գիտնալու Թէ ձին ո՞ւր կերթայ, կարկուտը դադրեցաւ, մի ժամ ևս կարկուտի միջէն գնաց, բայց քամին չկտրիր, ամպը կրկին պատեց երկինք, ցուրտ ու սառն մշուշը պատեց գետին, աչք դաչք չտեսնէր, ընկաւ խոր մըտատանջութեան մէջ, չգիտէր ո՞ր մի կողմէն գնայ։ Կարկուտը ձիու աղդրներուն ետևէն այնչափ հարուած տուած էր որ սառած էր, հաղիւ հազ քայլ կը փոխէր։

Անտառի եզրն էր, ձին կանգ առաւ, Թագաւորն ինչ արաւ, այլ ևս յառաջ չգնաց։

Ձին քշեց, հեռուէն տեսաւ երկու հոգի, հասաւ որ մի լուր առնէ, նայեց որ մի հարս և մի աղջիկ էին. ասաց։



—Սիրուն քուրի՛կ, բարի հարսնուկ, նոր տրեխները հագած՝ մանգաղները սրած ու մարգագետինը քաղած էք, կարմիր գդակը դրած՝ արծաթ դրամը վերան կարած՝ ասեղները կուրծքերնուդ զարկած՝ երկար անթարին հագած՝ կապոյտ շալուարը վերան քաշած՝ մետաքսեայ կարմիր գոտին կապած՝ դեղին մատանիք մատներուդ անցուցած՝ սերն ու կարագը կերած՝ սառ—սառ ջրերը խմած՝ ծիծաղելով կերթաք արդեօք աչքերը մէրճան, ատամները սատափ, դուք տեսա՞ք։

—Ախ աղաբէ՛կ, նաղշուն գուլպան հագած՝ հասել կոշիկը ոտքը անցուցած՝ մանուշակագոյն քօլոգը դրած՝ ունքերը սեւացուցած՝ կաղնի բիրը ձեռքը բռնած՝ որինդը բերնին դրած՝ կածէը քաղցը—քաղցը ու կը գնար, ոչխար ու դառներ ևս մայելով հետը կերթային շարեշար։

—Ախ սիրուն քուրի՛կ, բարի՛ հարսնուկ. Սեւեռ երբ անցաւ։

—Աչքերը մէրճան, ատամները սատափ, երեկ այս ժամանակ անցաւ, այնչափ սիրուն, այնչափ գեղեցիկ՝ սագի նման քայլ տալով կերթար։

Լուսիկ է. թոյլ տուեց, անցաւ, մի ժամ շարունակեց իւր ճանապարհը, պատահեցաւ մի ծերունու, որ մերկացեր —մօրէ մերկ գէպի Թագաւորը կըգայ։

—Արդեօք յիմա՞ր է Թէ նոր պիտի յիմարանայ, մտածեց Թագաւորն, ինչ ևս լինի, կաց, մի լուր կարո՞ղ եմ առնել իմ Սեւեռ հովիկէս։

Թագաւորը ձիու սանձը քաշեց. կանգ առաւ, ասաց։

—Ո՞ւստի կգաս, ո՞ւր կը գնաս, ասի՛ ծխէ, մի ծուխ լեց և խնդրեմ, լնձ ասա՛, աչքերը մէրճան, ատամները սատափ. եկաւ անցա՞ւ, տեսա՞ր։

Ծերունին ցնորած էր, ծուխը մէկ—երկու շունչ քաշեց, զգաստացաւ, բռնեց Լուսիկ Թագաւորի ձեռքէն, տարաւ անտառի մէջ փայտ կտրած տեղն, ասաց։

—Ահա՛ իմ կացինը, ահա՛ իմ կտրած փայտը. ահա՛ իմ իշու պոչն, որ գայլերն այս տեղ երեկ կերան, ահա՛ համեստը, ահա՛ փորքաշն, աչքերը մէրճան, ատամները սատափ երեկ

նստաւ այս քարի վերան, ծուխ մի քաշեց, հանգստացաւ, ելաւ որինգը դրեց բերանին, հօտը քաշեց, տարաւ, իմ սիրտն ալ հետը առաւ տարաւ. այլ ալ ես անհոգի ընկայ դեռևին, աչքերս սևացաւ, ես ուշաթափ, չեմ գիտեր ինչ պիտի ա-նեմ և ինչ կանեմ: Աղա՛, շարունակեց, որ որինգը բերանին դրեց, քաղցրաձայն փչեց, այլ ալ լեռ ու լանջ, սար ու ձոր ծառ ու քար. խոտ ու փոս շարուած եաևէն կերթային, ես ալ փոքր ինչ գնացի, իսկ նա աչքէս անյայտացաւ. իսկ ես շորերս հանեցի որ Մուղուրայ ջուրն անցնեմ, շուտ գնամ հասնեմ: Բայց լողացի—լողացի չկարողացայ միւս եզրէն դուրս գալ, մի մեծ ժայռի դէմ առի, դարձայ յետ, տեսայ շորերս չկայ:

Լուսիկ Թագաւորը գրպանէն հանեց երեք ոսկի, տուեց ծերունուն, ասաց:—Առ քեզ երեք ֆշու գին, Մանուշագոյն ապան ալ տուեց որ իւր մերկութիւնը ծածկէ, ինքը ձին քշեց, մինչև հասաւ Սնդամու քարալեռան ստորոտը՝ մութը պատեց, ճանապարհը կորսնցուց, առիւծ ու արջ սկսան վեր վայր երթևեկել. խոզերը՝ խանչել. գայլերն ոռնալ, ձին երկիւղից առաւ դողդողալ և իւրաքանչիւր դազան նշմարելուն յանկարծ կը խրտչէր, այնպէս որ Թագաւորը հազիւհազ վինք ձիուն վերայ կը բռնէր:

Ձիուն ոտտիկ ասպանդակեց յուսահատած. ձին քանի քայլ առաւ, յետ քաշուեցաւ, այդ կողմէն առիւծի մռընչիւն կգար, դարձաւ միւս կողմը քշեց. այդ կողմ ալ չգնաց, վասն զի այդ կողմից ալ գայլերու ոռնալու ձայնն առաւ ձին. ետև դարձաւ, դարձեալ ձին չգնաց, վասն զի այդ կողմ ալ մի խոր ձոր էր:—Ախ, ասաց, ցաւ չունէի, ցաւ գնեցի, արդեօք յաջողութիւն պիտի գտնե՞մ, գիշերս այս զարհուրելի դազաններէ և սարսափելի վայրէս ազատի՞մ, դէթ մի անգամ ալ Սեւևին պիտի տեսնե՞մ:

## ԺԳ.

## Լուսիկ վտանգներէ զերծ

Թագաւորը գիտէր որ շատ հեռու չէ Մեղկերտու քաղաքն և խօճա—Օվանէս, գիտէր որ վերի կողմը կէօկեռնիկ լեռն էր, բայց ճանապարհները չէր գիտէր:



Այդ տեղ շատ չարչարուեցաւ. ձիով այս ու այն կողմ գնաց—եկաւ, զննեց, մի նեղ անցք գտաւ, անցաւ, մինչև Տէր—Օվանի հովիտը հասաւ, արշալոյսը բացուելու վերայ էր, մշուշն ու մէգը պատեց. Լուսիկ շատ նեղացած էր, սկսաւ երգել իւր որանեղութիւնը փարատելու համար:

Թագաւորի ձայնը մի ծերունի լսեց:—Այս ձայնը մեր Լուսիկի ձայնին կը նմանի, ասաց, մթան մէջ վազեց մօտը, ձիուն սանձը բռնեց. շալակեց Թագաւորը, տարաւ վրանը, ինչ որ վառելիք պատրաստած էր, լցեց ու վառեց. ձիու ագին սառած էր, երբ տաքացաւ, քանդուեցաւ:

—Ո՞ւստի կգաս, Թագաւոր, ասաց ծերունին:

—Հայրի՛կ. մի՛ հարցներ:

—Որդի՛, ասաց, սէր ասածդ ծովու յատակը կիջնայ ու երեսը կը բարձրանայ, երկնուց երեսը կը թռչի, կընկնի լեռները, քարերու, ծառներու, անտառներու, գետերու, գայլերու, խոզերու, արջերու, առիւծներու մէջ մինչև անգամ կը մտնայ:

Թագաւորը հանգստացաւ, առաւօտեան ելաւ, ձին հեծաւ որ պիտի գնար. ծերունին ասաց—Այդ ի՞նչ է կանես, Թագաւոր. այդ ճանապարհներն եկած ճանապարհիդ չեն նըմանիր. քս առջև մեծ անտառ, կատաղած լնա, առիւծ, արջ ու գայլ կայ. ճանապարհին վերի կողմը առիւծը կը նստի, ներքին լնձը, կսպասեն մարդ անցնի, որ բռնեն, փարատեն, ուտեն. նաև անտառի մէջ աղբիւրներ շատ կան, ուր կինճեր կը կտրեն զմարդ, կա՛ց, ես ալ գամ քս հետ, այլ որ չէ կարող զքեզ ապահով տանիլ:

Ծերունին վահանն անցուց վիզը, թուրը կապեց մէջքը. հրացանն ալ առաւ ուսը, սկսաւ յառաջել. շատ և քիչ գնացին. իրար ծերունու ասածի պէս գոմէշի մեծութեամբ մի արջ. ձիու մեծութեամբ մի առիւծ ճանապարհին վերն ու վայրը կտրած են. երբ ձիերու ոտաց բոմբիւնն առին, դարձան դէպի Թագաւորն, իսկ երբ ծերունին տեսան, ցռելով վախուստ տուին. մի քիչ վերջը տեսան որ խոզերը պռօ՛—պռօ՛ անելով ու մրկալով, դէպի աղբիւրը կգան. Թագաւորը նստած էր աղբիւրի ական մօտ, խոզերը զայն տեսան, բայց

երբէք կարևորութիւն չտուին. իսկ երբ ծերունին տեսան, վախան, մտան անտառը և գողի նման կդային, ծառերու միջավայրէն կը նայէին, կը տեսնէին որ ծերունին այն տեղ էր, կը վախչէին: Մի ժամ գնացին. մի աղբիւրի ևս պատահեցան, տեսան աղբիւրի մի կողմն առիւծնէ պպզած—նստած, միւս կողմն ինձը. կատաղած՝ մարդու կսպասեն:

Իսկ երբ տեսան ծերունին, թոյլ տուին ու վախան:

Թագաւորն ասաց:—Ծերունի՛, դարձի՛ր, դնա՛, ես կերթամ.

—Այս Քուէն է. Պէտն դեռ վերջը կդայ, ասաց ծերունին, այս ոգն որ անցանք, կիջնանք մի այլ նոր ձոր, որ միայն Աստուած կերևայ. շատ Քարքարոտ է. աշխարհի մէջ ինչ ծառի անուն տաս, այդ տեղ կայ. արեգակի ճառագայթներէ մին գետին չդարնէր. այդ տեղն որ անցանք, մեր վերջի դարն է. այլ ևս վտանգ չկայ:

Գնացին, իջան այն ձորը. տեսան որ ծերունու ասածին պէս է անտառը, ծառները շատ ու խիտ են, աշխարհքի մէջ ինչ կենդանի ասես, այդ տեղ կայ, այդ տեղ մի ճանապարհ կայ, ժայռի վերայէն նեղ ուղղիմէ:

Ծերունին անցաւ առաջ. առիւծ պատահեցաւ, զարկեց, ինձ, արջ, խոզ, գայլ, ինչ որ պատահեցաւ, մի մի թուր ձգեց. զամենն ևս սպանեց:

Իւրեանց առջև մի ջուր պատահեցաւ, ծերունին ասաց.

—Ջուրն այստեղ պիտի անցնենք, ուրիշ անցք չկայ:

Իջան ջրի վերան. այդ տեղ մի ջրի պտոյտ կար, այդ տեղ նստան որ հանգստանան, տեսան անտառի միջէն մի լեռան ձի դուրս ելաւ, անցաւ ջուրն ու խրխնջաց:

Թագաւորի ձին սքլեցաւ. այն քանի խրխնջաց, Թագաւորի ձին սքլաւ, սքլաւ, հասաւ դետին. ահագին ձին մի հոր թիկի չափ եղաւ. վերջապէս սկսան կռիւ, իրարու վիզը խածել, ագացի զարնել. լեռան ձին ուժեղ էր. բռնեց Թագաւորի ձին, տարաւ ջրի հոսանքին մէջ, պտոյտի մէջ ընկան, անյայտացան: Թագաւորն իւր ձեռքը մտուց ծոցը, սկսաւ լալ:

—Ափսո՛ս ձիս, ասաց. առանց ձիու Սեռեն ո՞ր տեղ կարող եմ գտնել. ափսոս, հազար ափսոս Նարինջս.



Թագաւորն իւր սրտի ցաւէն սկսաւ ծխել. մէկ այլ տեսաւ իւր ձին ելաւ ջրի երես, լողալով դուրս եկաւ:

—Հայրի՛կ, ասաց, ասածիդ պէս եղաւ. «Քուէն ու Պէտն ետևէն է»: Տեսան ևս ջրի պտոյտը քանի անդամ ոլորեց, լեռան ձիուն և միւս եղբը դուրս ձգեց խեղդուած:

—Թագաւո՛ր, ասաց ծերունին, քո աչքը լուսաւոր է, մի լաւ տե՛ս, մեր ճանապարհն այն ձիու մօտէն է. երկաթ է.

Ջրի վերայ մի դերան կար, վերայէն անցան, ուղղուեցան դէպի վայր, մօտեցան ճանապարհին:

—Հայրի՛կ, ասաց Թագաւորը, լեռան ձիու դիակի վերան մեծամեծ գազաններ հաւաքուած՝ կուտեն:

Որդի՛, մեռնելու տեղը նոր եկանք, Սուրբ Տիկի՛ն հասնի:

Գնացին, մօտեցան ձիու դիակին, ծերունին ասաց:

—Թուրդ ձեռքդ պատրաստ պահէ, ձիդ ետևէն Թող գայ, ես ո՛ր մէկ ոտքս կը վերցնեմ, դու ոտքդ ոտացս տեղը դիր, չլինի՞ միջոցը բաց Թողուս:

Տեսան առիւծմի և ինձմի հաւաքուած դիակի վերան, թէ իրենք և թէ իրենց ձագերուն հետ կը լափէին, արջերն ու գայլերն ևս քիչ հեռուն պպզած ու նստած կը նայէին, առիւծին ու ընձին երկիւղէն չէին կարող մերձենալ:

Ծերունին առիւծի մօտէն պիտի անցնէր, առիւծը յարձակեցաւ վերան, Թագաւորը կայծակի Թուրը ձգեց, գլուխն երկու կէս արաւ, իսկ ինձը յարձակեցաւ, ձիուն մէջքէն բռնեց, Թագաւորը մի Թուր ևս դրա զարկեց, այդ ևս ընկաւ, ոտակեցաւ:

Դիակէն քիչ անցան, տեսան ճանապարհի վերան՝ մի նեղ տեղ ուր հատ վարշալ փորերնին յագեցուցած՝ նստած էին, անցնելու ճար չկար.

Վարշալներն որ զէն և մարդիկ տեսան, յարձակեցան, ծերունին ու Թագաւոր ճիշդ չորս ժամ Թուր ձգեցին, հազիւ հաղ կարողացան ոսպանել, ու այդ տեղէն ևս անցան:

Փոքր ինչ գնացին, յետև դարձան՝ տեսան մի առիւծի կղզոզ և մի ընձի ձագ, դեռ աչքերնին նոր բացուելու վերայ՝ սրանց ետևէն կդային. իրենց մայրերը կորոնէին:

—Ծերունի՛, ասաց Թագաւորն՝ երկինքը կորսնէինք, գետինը գտանք։ Վերուցին այդ ձագերը, գրին մախաղի մէջ, դրին ձիու վերան. երեք ժամ ևս գնացին, դուրս եկան անտառէն մի ապահով վայր։

Ծերունին ճանապարհը ցոյց տուեց։—Այս ճանապարհն ուղղակի Տէր—Օվան կը գնայ, ասաց. իմ ճանապարհն ևս ապահով է ուղղակի Ծառ-գովիկայ վերևէն։

Թագաւորը ծերունու վարձքը տուեց,—գնաս բարեաւ ասաց, նա ևս գնաս բարեաւ, ասաց, բաժանուեցան։

Ծերունին բաւական տեղ գնաց, թուրն արիւնոտ էր լուացը, դարձաւ գնաց վարշախներու մորթը հանեց որ տանէ իրեն համար մուշտակ շինէ։

## ԺԳ.

## Լուսիկ Սեռեի վրայ լուր կառնէ

Թագաւորն է, ձին քշեց, գնաց—հասաւ Տէր—Օվանի հովիտը, տեսաւ այդ տեղ երկու կին—հարսն ու կէսուր, բարև տուեց, ասաց։—Այ բարի մայր, սիրուն հարս, հագած էք տեղին մեռան ու մուճակը (մաշիկ), կը քայլէք մարգագետնի մէջ, կը քաղէք դոյնզգոյն ծաղիկներ, ո՞ւր է ձեր հովտավայրը, ո՞ւր են ձեր վրաններ, ո՞ւր են ձեր հօտեր։

—Իջի՛ր, աղա, սակաւ ինչ հանգստացիր, եթէ մեր վրանավայրը կը հարցնես, Տէր—Օվանի հովտի մէջ է, իսկ եթէ մեր իշխանը կը հարցնես, Կլոր Թագաւորն է, եթէ Սեռեը կը հարցնես, Բլուլ լեռան գլուխն է, դարշելի Քէլ Թագաւոր Քեմախու քառասուն հազար զօրքով լեռներու ճանապարհը կտրած, կուզէ Սեռեը վախցնել։ Ճանապարհներն ամեն կողմէ պաշարած է, թռչուն անգամ չեն թոյլ տար անցնելու, օդի մէջ կը զարնեն, եօթ օր եօթ գիշեր սոված ենք, չենք համարձակիր ասկէ այն տեղ գնալ, քայլ մի հնար դտայ, Քելեշ ձին հեծայ, Բլուլայ սարի վերան ելայ, Սեռեդ տեսայ, որ ծամերն արձակած՝ մազերը գետին թափած՝ ձեռներն երկինք բարձրացուցած՝ սեռեռ ատամները բացած՝ կաղօթէր առ Աստուած։



Երբ ես տեսայ Սեռեը այդ վիճակի մէջ, սիրտս կրակ ընկաւ, բերնէս բոց ելաւ. Թոքերս խորովեցաւ։ Եօթն օր միմիայն առանձին մնաց սարի գլուխ պաշարուած, մի սոխակ ունէր, երբ սրինգ կածէր, նորա մօտ կգար միշտ, հաց կուտէր, իսկ այս անգամ երբ նեղն ընկաւ, այլ ևս չերևեցաւ. ինքը կասէր։—«սոխակս պահպանեցի, ա՜խ, չեմ գիտեր՝ քաղէ՞ն յափշտակեց թէ ուրուրը, կատա՞ն բռնեց թէ շունը, դարշելի Քէլ Թագաւորի ճանկն ընկաւ թէ ջրի մէջ խեղդամահ եղաւ, մ՞ըդ սպանեց թէ գազան. արծի՞ւը յոշոտեց թէ որսորդի նեռին զոհ եղաւ։»

## ԺԵ.

## Լուսիկ չճանաչէր զՍեռեն

Թագաւորը քշեց գնաց՝ մի բարձր լեռան ստորոտը հասաւ, նայեց—տեսաւ լեռան լանջի վերան մի հովիւ սրինգ կածէ, լեռ և լանջ քաղցր ձայն լցեր է, Թագաւորը ձին քշեց։

—Հո՞վիւ, հո՞վիւ, ձայն տուեց, իսկ հովիւը չլսեց։

Հովիւը ժայռի մի գլխին նստած լինելով՝ Թագաւորը չէր կարող իւր ձիով այդ տեղ բարձրանալ, ու Սեռեէն մի լուր առնել, այլ մի ժամ լեռան կողերն ոլորուելով մօտեցաւ հովիւին, ասաց,—բարի օր քեզ, հովի՛ւ։

—Աստուծոյ բարին, գոլվաթ՛որ, ասաց։

—Դու հովիւ ես, չի՞լինիր արդեօք այս ձագերուն կաթտաս, շատ քաղցած են։

—Ո՞ւստի կգան, ո՞ւր կը գնան, իշխան աղա՛, հարցուց հովիւը։

—Ա՜խ, հովի՛ւ, աչքերն մէրճան, ատամները սատափ, դու հովիւ ես, նրանք ևս քոնման վրան ու հօտ ունին, տեսա՞ր։

—Այն քո ինչն է, աչքերը մէրճան, ատամները սատափ։

—Աչքերը մէրճան, ատամները, սատափ, ծանօթ է։

—Աչքերը մէրճան, ատամները սատափ չեմ ճանաչեր, միայն լսեցի Քեմախու (Կամախ) Քէլ Թագաւորը փախուցած է։

—Ի՞նչ տեղէն փախուցած է։

—Հաւլորու լեռնէն։

—Ուրեմն ի՞նչ պիտի լինի։

—Սեռև քսան հատ քեռի ունի, եկած կը կռուին, չը-գիտեմ աղջիկը տարած են, թէ քեռիներն ազատած կըլլինին, գնա՛ վրանները, տա՛ այն տեղ կերևայ, հարցուր։

Լուսիկ Թագաւորը իւր ձին արագ—արագ քշեց. գնաց վրանի մը դուռ իջաւ, տեսաւ—ի՞նչ տեսաւ—վրանի տէրն իւր անունն Փօթ, կլինն ևս իւր զօքանչը. Սեռևի քեռիներն ևս այն տեղ, միասին առաջ եկան, ձին բռնեցին, իջուցին։

—Առտուած բարի տնէ, ասացին, մինա՞կ ես։

—Դէպքն այսպէս յաջողեց, լսեցի ձեր մեծադործու-թիւնը, մինակ եկայ։

—Ի՞նչ լսեցիր։

—«Կամախու Քեռ Թագաւորն եկած՝ Սեռևը փախուցածէ»։

Սեռևի մեծ քեռին ասաց։—Մենք քսան հոգի ենք, երբ մենք մեռանք, այն ժամանակ Սեռևն այլ ևս մեզ պէտք չէ։

Սեռևի մայրը հարցուց։—Այդ լեռան ստորոտէն եկաը, Սեռևը չտեսա՞ր։

—Չէ՛, ասաց, մի ուրիշ հովիւ տեսայ, նստած սրինգ կածէր, հարցուցի բան չասաց։

—Քեզ խաւիսած է, ասաց զոքանչը, նա Սեռևն է։

## ԺԸ.

## Թագաւոր Լուսիկ Փօթի վրանի մէջ

Թագաւորը մի ամսոյ չափ այդ տեղ մնաց, ամէն օր մօտակայ լեռները որսի կը գնար. մի օր ևս ուղղուեցաւ գնաց Բաղինու լեռն, այն տեղ—լեռան գլուխը տեսաւ մի սառն աղբիւր. աղբիւրի շուրջն անտառ, իւր բրով գետինը փորեց, մի փոքր դուռ կազմեց, շուրջը քարեր շարեց, մը-տաւ մէջը, սքլեցաւ և քիչ մնջոցէն վերջը տեսաւ մի զոյգ—էդ և արու այծեամներ, եկան ջուր խմելու. խմեցին, աղ-բիւրի մօտ կռնակ կռնակի տուին ու պառկեցան, Լուսիկ նետը ձգեց, երկուքն ևս զարնուեցան, ընկան։



Փոքը ինչ ևս մնաց. տեսաւ մի խումբ եղնիկ եկան, ո-րոց մէջ մի առջաը կար, ջուր խմեց. եկաւ իւր դիտարանի առջև նստեց, զայն ևս նետով սպանեց։

Վերը ելաւ որ սպանուած եղնիկը միւսներու մօտ քաշէ, տեսաւ այն կողմէն հինգ մարդ եկան, բարև տուին, մէկն ասաց։—Լուսիկ Թագաւորը, քեզ երկինքը կորոնէինք, գետին գտանք։

—Դու սխալ ես, ասաց, ես Լուսիկ Թագաւորը չեմ։

—Դու նշան ունիս աջ երեսի աչքիդ և ականջիդ մի-ջավայրն, այդ նշանէն քեզ ճանաչեցի, մայրս ինձ յայտնած է ժամանակով։

Այդ հարցնողը Լամբքայ Կլօր Թագաւորի որդին էր։

Մտան անտառը, մի մի ձող կտրեցին, գօտիներն արձա-կեցին, որսերը կապեցին ձողին, ուսեցին ու գնացին։

Տեսան անտառի ներքին ծայրը մի աւազան կայ, այդ աւազանի շուրջը գեղեցիկ կանաչով ու ծաղիկներով զարդարուած էր, տեսնողը կը կարծէր դրախտ ասուածը լի-նէր. այդ տեղ վարդ ու նուռ կար տնկուած, չորս բոլորն ևս գեղեցկագոյն պալատներ էր կառուցած, դու մ՚ասեր, այդ տեղ Կլօրին կը պատկանէր, Կլօր Թոյլ չտուեց Լուսիկին, պահեց իւր մօտ, ամէն օր որսի կը գնային։ Քանի օր այդ տեղ մընաց Լուսիկ։

Մի օր Կլօր հարցուց։—Լուսի՛կ, քո հարսանիքն երբ պի-տի վայելենք։

—Մի տարի ժամանակ կայ դեռ, ասաց։

—Շատ զգաստ շարժեցաւ Փօթ, եկած՝ իմ սահմանի մէջ իւր վրանները զետեղած է, քո պատիւը չլինէր, նա էր համարձակիր այդ բան անել, քո հօր պատիւը մեր վերան շատ է, Մենք ունենք թշնամիներ, մի տարի ամէնը միաբա-նեցան, մեր վերան յարձակեցան, քո հայրը—Բերդըկու Թա-գաւորը գմեզ իւր բանակով ազատած է, կասէ մայրս։ Այժմ, Լուսի՛կ, քո հօր արածին փոխարէն՝ ես երախտապարտ կը մնամ, եթէ մի դէպք պատահի, ինձ լուր տուր որ յօգնու-թիւն հասնիմ։

Լուսիկն ելաւ էկաւ Փոթի վրանը, երեք օր ևս մնաց Սեռևին մօտ, առլուծի ու ընձի ձագերն յանձնեց Սեռևին որ պահպանէ, ինք ընկաւ ճանապարհ որ գնայ հասնի իր թագաւորական աթոռը:

Օդը պարզ, արեգակը գեղեցիկ կը փայլէր, ձին քշեց, գնաց—հասաւ Զուխուր. Զուխուրէն Շօռաուն. Շօռաունէն Սրճողու կամուրջն և դարձաւ զառիվայր—դէպի Սուրբ Տիկին:

Տեսաւ քառասուն ձիաւոր տարածուած՝ Գալդաշու կողմն անտառներու մէջ ընկած լեռ ու ձոր՝ մի ինչ բան կորոնեն. որոցմէ մինը ձին ուղղեց Գալ—դաշու ոգն իվեր դէպի յինք—թագաւորին կդայ. միւս ձիաւորներն ևս ստորոտի շրջապատով միւս ձորն անցնելու վերայ էին. այն մի ձիաւորը հասաւ Լուսիկին, ձիէն ցած թռաւ, ձեռքը բռնեց, համբուրեց, ասաց:—Թագաւոր ապրած, այս ո՞ւր էիր վեց—եօթ օրէ ի վեր, գիշեր—ցերեկ մեր քուն կտրած՝ ընկած ենք լեռներն, այլ ևս անտառ և լեռ, սար ու քար, դեռ ու ծով չթողինք, ամեն ծակ ու ծուկ որոնեցինք. չգտանք: Անցանք Քեռ թագաւորի սահմանը. նորա երկիրն ևս ոտնդրեցինք. դարձանք գնացինք Մատարու լեռն, եկանք Պուղլուխը, քաղաք և գիւղ մտանք. ամեն կողմ հարց և փորձ արինք. չգտանք ու չգտանք:

—Քեռ թագաւոր իմ թշնամիս էր, չէիք գիտէր նորա սահմանին մէջ իմ ոտք չեմ դներ, ինչ գործ ունէիք այն տեղ.

—Մի սև պառաւ լուր տուեց թէ «Քեռ Սեռևը փախուցած է. Լուսիկն ևս ընկած է ետևէն, զարկուած է, բռնուած է, յայտնի չէ» մենք ևս գնացինք, որոնեցինք. չգտանք:

Լուսիկ թագաւոր այդ տեղ մի հրայան արձակածի պէս, ձիաւորները չորս կողմէ շախ—շախ ձիաններու ոտքերը քարերու զառնելով հաւաքուեցան շուրջն, այնպէս որ ձիանց ոտներու տրոքիւնը ասպանդակներու ու թրերու շըխըրտոցի ձայնն ամբողջ անտառը կենդանացուցած էր.

Թագաւորն իւր ձիաւորներով ելաւ Սուրբ Տիկին, ուխտ արին, համբուրեցին, գնացին տուն:



## ԺԷ.

## Փոթ իւր հօտը ապահով վայր կիջեցնէ

Աշնան վերջի ամիսն էր. Տէր—Օվան շատ ձիւն եկաւ. հօտեր երեք օր—երեք դիշեր արածելու չհանուեցան, դըռներու առջևի ձիւնը որըեցին. այդ տեղ փալաս խոտ կար, ոչխարներն արածեցին:

Տակաւ առ տակաւ ձիւնն որ թանձրացաւ, այլ ևս Փոթ չէր կարող իւր հօտը կերակրել, հեծաւ իւր ձին, քշեց—գնաց դէպի Կլոր թագաւորը: Ժամանակին Փոթ Կլոր թագաւորի սիրտը գրաւած էր, իւրաքանչիւր ամսագլխին նորա մի դառ և մի ոչխար կը յղէր: Երբ Փոթ հասաւ կամարակապ դռան, Կլոր դռնէն տեսաւ, ասաց՝

—Այդ մեր Փոթն է. ձին պահպանեցէք, զինք վեր, իմ մօտ բերէք:

—Առտուած բարին յաջողէ, Փո՛թ, ինչ կայ, հօտդ ինչպէս է, հարցուց Կլոր:

—Ի՞նչ պիտի լինի, քառասուն թիզ ձիւն եկած է. եկած եմ յօգնութիւն խնդրելու. տնով հօտով բանտարկուած ենք:

Կլոր հեռեկիներ հագած հազար մարդ յղեց, նրանք մինչև Փալս ճանապարհը բացին, ուստի ևս Մեզկերաի քաղաքի դլուխն, ուրիշ խոնարհ արեգի էր, ձիւն չկար:

Զմեռը Փոթ շատ նեղութիւն քաշեց, պատրաստ խոտ չունէր հօտը կերակրելու, մի ճար ու ճարակ տրաւ մինչև որ Կլոր թագաւորի մարդիկ քիչ շատ ճանապարհ հարթեցին. Փոթ հօտը քշեց, ելաւ ցած, ուր միջոց մի արեգիններու մէջ արածեց:

Այն օր որ Մարտ ամսոյ մէջ պիտի մտնէին, մի թեթև ձիւն եկաւ, Փոթ արածելու տեղ գտնելու համար անցաւ Սրճողու կամուրջը, քշեց Ջրիվայր մինչ Խռնեկի [1]) մարդագեղիններն, ուր արեգակը բարի, օդը տաք, հօտն ևս

---

1) Ի նախնիս բաղամ եղած և այդ գիւղի վայրն, կասեր Մինաս բարար

սկսաւ ծնիլ, խոտը առատ, կանանչը սկսաւ աճիլ, հօտն ևս արածել, ոչխարը բէր կգար, առատ կաթ կտար:

Այդ վայրը Փօթին շատ հաճելի եղաւ, նոյն տարին լուր վրանն ոչ մի տեղ չմոխադրեց, վասն զի տեսաւ ջրերը շատ, գիւղացիք ևս ոչ հօտ ունին և ոչ վրան, արօտավայրն առատ, մարդիկ մարդասէր, օդն ու ջուրը զով, գիւղը եօթ տուն:

Փօթը շատ հեռատես մարդ էր, տեսաւ որ գիւղացիք աղքատ են և կթան չունէին, տարին տասն երկու ամիս այդ եօթ տան կաթը, մածունը և պանիրը կտար:

Սեռև աւելի խիղճ ունէր, մի օր հօրը ասաց,

—Հայրի՛կ, քեզնէ մի բան պիտի խնդրեմ,

—Ասա՛, Սեռև, ասաց Փօթ, գիտես որ ես քեզ շատ կը սիրեմ:

—Հայրի՛կ, ասաց, գիտեմ, գիւղացիք երբ կաթ, մածուն, տանեն, ամանը ետևը կը քանեն, կամաչեն որ ուզեն, այդ շատ մեղք է. միւս արած բարիքդ ևս Աստուծոյ մօտ ի զուր կանցնի, որա համար է որ կաթն աչք կառնէ, կը թթուի:

—Չա՛ւակս, ասաց Փօթ, հօտը քեզի կը պատկանի, ինչ կերպ կուզես, այնպէս կարգադրէ,

Բերեց Սեռև ինչ արաւ—եօթ տան եօթ հարիւր մաքի տուեց, իւրաքանչիւր տան դէուխ հարիւր հատ կթան մաքի ու ասաց:—

—Դարձեալ ես կարածեմ. կը յղեմ ձեր տները, հօտը պահպանելու, հոլիւ քռնելու նեղութիւն մի՛ կրէք:

Սեռևի հայրն ու մայրն յօժարեցան:

---

## ԺԷ.

### Սեռեւի հօտը վտանգաւոր վիճակի մէջ

Յանկարծ մի գիշեր սկսաւ ձիւն տեղալ. երեք օր ու երեք գիշեր շարունակեց, մարտ ամիսն է, ներսն ոչխարնեբու կեր չկայ:

—Սեռե՛ւ, ասաց Փօթը, լուծը խրէ ձեռան մէջ, տեսնենք՝ ո՛րչափ ձիւն եկած է:



Սեռև լուծը խրեց, տեսաւ, լուծը գնաց կորաւ:

—Այ ավսո՛ս, ասաց, ինչ պիտի լինի մեր հօտի վիճակը ու սկսաւ լալ:

Ձիւնը դարձեալ շարունակեց տեղալ, երեք օր՝ երեք գիշեր եկաւ ու եկաւ. ջուր չկար որ ոչխարները խմէին, ձիւնը կը հալեցնէին, կը խմեցնէին:

Փօթ սկսաւ խոտի մասին հոգ տանել, իւր դրացիք Փօթին յայտնեցին:—Մեր գիւղի առևտրական հրէին մօտը խոտ շատ կայ, ա՛ռ, վերջը մի բան կը լինի, Աստուած ողորմած է:

Փօթ գնաց հրէի մօտ, բարև տուեց. ասաց,—Լսեցի քո մօտ խոտ շատ կայ, արժէքով տո՛ւր ինձ, տանեմ, հօտեր մեռան ամբողջ:

—Հա՛, ես գիտեմ որ խոտի համար եկար, եօթ գիւղի խոտ ունիմ, դու քանի հօտ ունիս, իւրաքանչիւր հօտ քանեկան են:

—Եօթ հօտ ունիմ, հօտ ասածդ հազարական կը լինի:

—Այո՛, ասաց հրէան, երեք կեր խոտ կտամ, եթէ աղջիկդ որդւոյս տաս:

—Ամենուն առանց դրամի տուիր, իսկ ես դրամ կտամ:

—Իմ տղան քո աղջկան վերայ սէր ձգած է, եթէ բերի՛ր, կտամ:

Փօթ զայրացաւ:—Իմ հօտ ամբողջովին ջարդուի, ես հրէին աղջի՛կ կտամ, ասաց, թոյլ տուեց, եկաւ տուն:

Եկաւ որ Աստուած հեռու անէ, հօտը անօթի կը ջարդուի, որ մէկը կտուռ, որ մէկն ևս գետնի տարդը կուտեն, որ մէկն ևս սիւները կը կրծէին, մի քանիսն ևս բերանը դեռ տինը չհասնիր՝ իւր վերայի բուրդը կը կրծէ, այնպէս որ շատերուն միայն կաշին մնացած էր և սկսած են կաշին ևս կրծել, շատերն ևս միւսներու ոտաց տակ ընկած խեղդուած են. ձեռքը դրեց ծոցը, սկսաւ լալ:

Դրացիք հաւաքուեցան Փօթի մօտ, քաջալերեցին:

—Մի՛ լար, ասացին, Աստուած ողորմած է, գնա՛ հրէի մօտէն խոտ առ, նա ամենուս տուեց. քեզ կտայ ու կտայ:

—Գնացի, ասաց Փօթ, ուզեցի, ասաց «եթէ աղջիկդ իմ տղին տաս, խոտ կտամ միայն երեք կեր:

Դրացիք հնար խորհեցան, որ միասին գնան հրէի մօտ: Գնացին, ներս մտան:—Բարև քեզ, տատա՛, ասացին:

—Աստուծոյ բարին, բարի եկաք, նստէք, ասաց:

Նա մտածեց թէ գործը յաջող է, աղջիկը պիտի բերեն։ Դրացիներու հասակաւորը և պատուաւորը Բէճօն էր, ասաց հրէին:—Տատա՛, երբէք չես հարցներ՝ ինչու եկած էք:

—Բարի. հաղար բարի, մարդ կը հարցնէ՝ ինչու եկած էք:

—Եկած ենք քո մօտ խնդիրք անելու, մենք եօթ տուն ենք. Փօթն ևս ութ տուն, Փօթը նեղ աւուր մարդ է, նա շատ պէտք է, խոտ պիտի տաս որ նորա հօտը չջարդի:

—Աղջիկը կը բերէք տունս, խոտը կառնէք, կերթաք։

—Մենք կերաշխաւորենք, Փօթ այժմ հովիւ չունի, երբ գետինը սևացաւ, հովիւ մի կը վարձէ, մենք կը բերենք, կը յանձնենք:

Հրէան ժպտաց, ասաց:—Դուք որ վարպետի կը գնայիք, ես քառասուն տարի առաջ սովորած՝ կը դառնայի, դուք եթէ աղուէս էք. ես ևս աղուէսի պոչն եմ, մինչև աղջիկն իմ տուն չբերէք, խոտ չեմ տար:

Տեսան հնար չկայ, ելան բաժանուեցան՝ գնացին տներ:

Փօթն ևս ձեռքը ծոցը դրած՝ լալով գնաց իւր տուն, սրտէն արիւն կը հոսի, գոմը՝ հօտի մէջ մտնել չուզէր, դարձաւ տան ետևէն գնաց որ մագիներու աղխողոմ բառաչիւնը ականջին չդառնէ, լալով մտաւ տուն:

Կինն ասաց:—Ի՞նչ արիր, խոտ բերի՞ր:

—Կնի՛կ, ասաց Փօթ, գիս մի՛ խօսեցներ:

—Խօսք տայիր, մարդ:

—Զտուեց, կնի՛կ, «աղջիկը բերէք, նոր կտամ», ասաց:

—Տա՛ր ու տո՛ւր, ինչ անենք, եօթ հօտ ունինք, պիտի ջարդենք, ի՞նչ անենք:

Փօթ բերանը բռնեց, ասաց:—Նախնիք լաւ ասած են, «կնոջ ծամեր երկար, բայց խելքը կարճ կը լինի»։ Ի վաղուց անտի կասեն, սուտ չէ, «եկած իմ այրած որսի վերան մանանեղ կը ցանես»: Հարիւր հաղար հօտ լինի, ես իմ աղջկան խաչեմ, նորա արեան պարտաւո՛ր լինիմ, ես հրէին աղջիկ տամ—ի՞նչ խելքի վերայ ես, կնի՛կ:



Կնիկ ինք գինք աւելի խորագէտ համարելով՝ գնաց Սեաւեի մօտ, որ գոմն էր, և հօտը կը խնամէր:

—Հա՛, ասաց Սեաւ, բաբարը խոտ չգտա՞ն։

—Գնաց հրէին մօտ, կասէ—«աղջիկդ բեր որ խոտ տամ»:

—Սեաւ իւր մայրը գրկեց ու ձգեց դուրս դուռը ամրապինդ փակեց:—Ի՞նչ խելք է, ասաց, ես գնամ, հրէի տը-գինն առնեմ, իմ հայրիկս որ միշտ կասէ, «հասարակ կնոջ մտքը երկար, իսկ խելքը կարճ կը լինի», ճիշտ է։

Տե՛ս, Սեաւդ ի՞նչ արաւ—գլխի քօլողը հանեց, լուսամտից ձգեց մօրը, շալը, թաղիքը, բիրը և ամէն ինչ որ հովուական էր՝ ձգեց դուրս,—ա՛ռ, դնա, այլ ևս ինձ մայր չես, ինչպէս կը յօժարիս գիս հրէի աղուն տալ, մայրն ևս այդպէ՛ս լինի՞, վա՜յ մայր, մայր, մայր, ո՞ւր գանեմ որդեակը մայր:

Սեաւի վերան մի շապիկ մնաց, ոտի կանգնեցաւ, բազուկներն երկինք պարզեց, սկսաւ աղօթել:

Մինչև կէս գիշեր ոտի վերայ կաղօթէր, տեսաւ երկինքը մութ պատեց, մի սև ամպ դուրս ելաւ, փայլակ ու կայծակ, նաև որոտում իրարու յաջորդեցին: Սեաւ իւր սիրտն առ Աստուած վերցուցած՝ այնչափ սրտառուչ—այնչափ սրտառուչ կուլար որ աչքերէն արտասուքի տեղ արիւն սկսաւ գլորիլ:

Սեաւ շարունակեց իւր աղօթքը մինչև հաւախօսը՝ դուրս նայեց, տեսաւ ձեռն մէջ անկած լուծը, ընկած է գետին:

Առաւօտեան շուտ մայրը Սեաւի դուռը կանգնեցաւ, զարկեց դռան։ Սեաւը ուշաթափ ընկած էր, նա ոչ քուն էր ոչ զարթուն, ոչ երկինքն էր, ոչ երկրի վերայ, ոչ մեռած էր և ոչ երակի մէջ, այլ միայն մի շապիկով պառկած, արեգակն ևս իւր գեղեցիկ ճառագայթները ներս թափանցած էր, և փռած աղջկան վերայ:

Մայրն մի աթաբի կտոր առաւ, ձգեց Սեաւին, Սեաւ թառաւվեր՝ տեսաւ գեղեցիկ արեգակը՝ սրտով ուրախանալ սկսաւ։

Մայրը ասաց:—Ջա՛ւակս, դուռը բա՛ց, երեկ ձիւնը թթի գաղաթն էր բարձրացած, իսկ այս օր արեգակն է զարկած, տակը ելած, ծմակներն ևս ու սպիտակ են եղած, իսկ արեգիններն ամբողջ սևացած, դու որ սրտառուչ Աստուած

կանչեցիր, Աստուած քո ձայնը լսեց, քեզ յօգնութիւն հասաւ, Լսեց հօտի աղերսողում բուինը, քեզ ևս անդութ հրէի ձեռքէն ազատեց։

Աղջիկը մօրը ասաց։—Ո՞ւր են, մայրիկ, տրեխս, կօշիկս, կաշնի բիրս, ո՞ւր են սրինգս, թաղիքս, մախաղս, գուլպաներս. ո՛ւր են գօտիս, շալս և քօլոդս, շուտ արա՛, բե՛ր, մայրիկ, հօտը դուրս հանեմ, հօտի մեղքի մէջ ընկղմեցայ։

Դուռը բացաւ, տեսաւ դարուն է, սկսաւ երգել։

—Ձիւնը բարձրացաւ մինչև թթի ծայրին,

Հայրիկս ղիս խոստացաւ տալ հրէի աղին։

. . . . (սոյն երգն երկար և անյարմար էր)

## ԺԹ.

### Սեսեւ ապահով

Սեսեւ դուռը բացաւ, սրինգն ածեց, հօտը քաշեց տարաւ արօտ, արածեցին մինչև երեկոյ, երեկոյին դարձաւ տուն։ Հետևեալ օր գնաց, այլ ևս երեկոյին չվերադարձաւ, օդը տաք, արեգինները լաւ արօտ՝ դիշեր ցերեկ կարծէին։

Տակաւ առ տակաւ, արօտը՝ կանանչը բարձրացաւ, ծաղիկներ սկսան բացուիլ, ամենի առաջ երևեցան բանբոզ ծաղիկներն, ապա կակաչը։ Ծմակներու նարկիզն ևս գլուխ տուեց։

Սեսեւ հովիկ հօտը քշեց Մուղուրայ Ջուրն իվեր, գնաց հասաւ Ծառ—գովիկայ անտառի մօտ, ուշադրեր թոյլ տուեց այն տեղ, ինք բարձրացաւ անտառի եզրը՝ մի դարի վերայ, Պառաղն ու Պօռտէն մնացին հօտի մօտ. առիւծն առջևէն՝ ինձն ետևէն բարձրացան լեռան ոտն ի վեր մինչև գլուխը. այստեղէն կը տեսնուին Բալուայ լեռներն, Խարբերի Պուղլուղը, Քղլի Սուրբ Լոս լեռն։

Այդ տեղ մի աղբիւր կար, Սեսեւ հովիկ իւր վերայի թաղիքը մի կողմ ձգեց, բիրը վերան դրեց, բաղուկները սոթեց, առիւծն ու ինձը խաղցած լինելով՝ որպէս տղմի մէջ թաւալող գոմէշ՝ երես ու մերես տղմոտած էին. բերեց լուաց —մաքրեց։



Իւր հետ վոբը տիկ մի իւղ ունէր, միշտ առիւծի վերան ձգած էր, ընձի վերան ևս ասման—չասման։

Առիւծի վերայէն իւղ առաւ, ընձի վերայէն ևս սկաւառակը, ճմուռ շինեց, կերաւ, հացը կաթին մէջ փրթեց, առիւծն ու ինձ ևս վոբեբնին կշտացուցին։

Տեսաւ այն կողմէն մի ծերունի, բիր մի ձեռը՝ կուղ—կուղ եկաւ։—Բարև, բարի՛ հովիւ ասաց։

—Աստուծոյ բարին, հայրիկ, ո՞ւր կը գնաս։

—Մեղկերտու քաղաքը կերթամ, որդի՛։

—Հայրի՛կ, քո ճանապարհը ցածը մնաց։

—Որդի՛, կէս ժամ պիտի երկարի, կէս ժամ ուշ կը գնամ. այս Ջուրը կը նայեՙ, անմահական Ջուր է. այս Ջրի համար այս տեղ բարձրացայ, ես կը լինիմ 300 տարեկան, այս Ջուրն է որ զիս կը պահէ, միշտ այս Ջրէն կը խմեմ։

Ջուրը խմեց, գնաց Սեսեւի մօտ ու նստաւ։

—Հայրի՛կ, ասաց Սեսեւ հովիկ, այդ ինչ թուրիք է, շալակած կերթաս. Հոգնակցաւ ծերունին, դարձեալ ասաց։

—Այդ ինչ թուրիք դառակ է, շալակած կերթաս։

Դարձեալ չհասկցաւ, ասաց։

—Որդի՛, մարդուն զաւակ կը լինի, թող բարի լինի, երեն օգնէ, երկու աղջիկ ունիմ, մի քիչ ծխախոտ պատրաստեցի որ ծխեմ, այժմ ինձ ստիպեցին, ուլինք—մուլինք կը պահանջեն, ես ևս ստիպուած եմ բերնէս կտրել, ծխախոտս տանել Մեղկերտ, վաճառել և ուլինք բերել։

—Աղջիկներդ ինչ շնորհք ունին, որ ուլինք կը տանես։

—Աղջիկներս ոչ մի շնորհք—արհեստ չունին, այս հասակիս մէջ փայտ կը շալակեմ, կը տանեմ ծախեմ, աղջիկներս կը պահեմ, մինչև այժմ իմ կռնակէն կը կրծեն, մի կաղ էշ և մի կաղ այծ ունիմ, նրանք ևս չեն պահպանէր, ոչ Ջուր կտան, ոչ խոտ։

Սեսեւ գրպանէն հանեց հինգ սահակ տուեց ծերունուն։

—Գնա՛, մէկ էշ առ, տանդ գործերը տե՛ս, զիս օրհնէ։

Ծերունին մտածեց—ես սրան ինչ տամ որ նորա տուածի փոխարէնը լինի, ահա, արաւ ինքն իրեն, այս հովիւն իմ տղան լինէր, իմ աչքերը չլինէին, իմ աղջիկները զիս քարէ

քաը, լեռնէ լեռ ձգած են, գիշերն ալ թոյլ չեն տար որ քնիմ։

Ծերունին շալակէն ցած առաւ տոպրակը, դատարկեց մի սալի վերան, որ մազի նման մանրած՝ չափազանց գեղեցիկ և կարմիր գոյն ունի, կը նմանի փայլուն սաթ, որ մարդ կուզէ չծխէ, այլ ուտէ։

—Բարի՛ հովիւ, ասաց ծերունին, բան չունիմ քեզ տալու, այս ծխախոտը քեզ կը նուիրեմ, ա՛ռ այս ծխափայտն ալ որ Ծառ—գովիկայ անտառի հաւկուտ փայտէ շինուած է և քեզ յարմար։

Հովիւը ծխախոտը լցեց տոպրակը։

—Դո՛ւ իմ նուէրին չհաճեցա՞ր, ասաց ծերունին։

—Հայրի՛կ, տա՛ր, ես չեմ ծխեր։

—Եթէ չես ծխեր, տար թափի՛ր, ասաց ու ելաւ գնաց։

—Սեռաւ հովիկ հաց հանեց, կերաւ, եկաւ հօտի մօտ, տեսաւ ինչպէս որ ոչխարները արած էր արօտ՝ երկու ժամ էր, դեռ գլխնին չեն բարձրացուցած, կարածեն։

Սրինգը դրեց բերնին, ածեց, տեսաւ դարձեալ գլուխները չեն բարձրացնէր, իւրեանց շուրջը չեն նայիր։

—Այս եղաւ երկու ժամ որ կածեմ, շրթունքներս ածելով ճեղքեցաւ, բերանս ընդարմացաւ, լեզուս գլորուաւ, այս օր իմ մագիներն ինձ չեն լսէր, մի բան կայ։

## Թ.

## Սեռեի հօտը կոտորեցաւ

Դու մ՚ասես, նորաբողբոջ խոտը որ դեռ նոր ելած էր հողէն. քաղցր ու աղի էր։

Մի անգամ ալ սրինգն ածեց, այս անգամ Պօռտէն ու Պառաղը հասկացան որ իրենց համար է կը փչէ, շուտ վազեցին, հաւաքեցին, բերին իւր մօտ ամբողջ հօտը։

Իսկ հօտը նորածիլ խոտի քաղցրութիւնը մի անգամ զգացած էին, փախան գնացին կրկին արածելու, վասն զի երկար մինչոց անկերը մնացած լինելով՝ ադահացած էին, Սեռեն ալ չէր գիտեր որ նորածիլ խոտն երբ շատ ուտեն, կը մնասուին։



Սեռեն երբ տեսաւ որ փախան։—Շներս յանցաւորը չեն, ասաց, դարձեալ սրինգն ածեց։

Այս անգամ առիւծն և ինձը գնացին, հաւաքեցին, բերին։

Պօռտէն ու Պառաղ՝ առիւծն ու ինձ հօտի շուրջը բռնեցին, թոյլ չտուին այլ ալ փախչելու։

Այդ տեղ աղբիւր կար, ոչխարները սկսան ջուր խմել. խմողը կը քաշուէր մի կողմ կը պառկէր։

Փոքր ինչ վերջ Սեռեն տեսաւ որ պառկած ոչխարը սկսաւ ուռիլ ու ոքալ. Սեռեն զգաց որ հիւանդ են. ընկղմեցաւ մտածման մէջ. ծերունի հայրիկի ծխախոտէն մի քանի դալիեօն լցեց ու ծխեց։

Կանչեց իւր մօտ Պօռտէն ու Պառաղն, առիւծն ու ինձը, ճմուռ շինեց, փորերնին կշտացուց, ինքն ալ կրկին և կրկին ծխեց. նայեց իւր շուրջն, աչքն առաւ Տաղ—պաղու գլխին։—Հայ ափսոս, ասաց. եթէ մի օր ալ այս դէպքը չպատահած լինէր, Տաղ-պաղու գլխի ձիւնը կը վերանար. վրանս այն տեղ կը դեռեղէի. հինգ ամիս վրանս հաստատուն կը պահէի. վասն զի այն տեղի խոտն ու արօտ անսպառելի են. այն տեղ խաւրծիլ շատ կայ. ձորերն ամբողջ մանուշակ լինքն է. քաղցր կանկառը քաղելով չսպառիր, հաղար ու մէկ ծաղիկի ամբողջ տեսակն այդ վայրը կայ, որոց հոտն այնչափ քաղցր կը բուրէ և այնչափ սաթ ու ձոր աղդած է. ձմեռն անդամ բուրմունքը կզգաս։ Խնկալոճի քաղցրաբոյր ծառները խմբով մի կողմ, շրջքին մի այլ կողմ, սերկևիլը մի ուրիշ կողմ, խնձորի և տանձի տեսակներն ալ խումբ—խումբ տարածուած ու պատած են այդ տեղի անտառներն, որք ինքնաբոյս են։ Իսկ գեղեցկատեսիլ բռինչքի ծառներն ալ ծմակներու մեծ զարդարանքն է։

Սեռեն հովիկ—յիշեց Տաղ—պաղու հովտի գեղեցկութիւնը, այդ գեղեցկութիւնը վայելելու ապագայ ցանկութիւնը գինք հառաջանքի մէջ ընկղմեց, արագ—արագ սկսաւ ծխել։

Անսովոր ոչխարը՝ որպէս որ նորածիլ խոտը կերաւ, հի-

ւանդացաւ, ինքն ևս անսովոր՝ ծխեց—ծխեց, գինովի պէս խելացնոր եղաւ, ուշաթափ ընկաւ:

Զարթեցաւ որ երեկոյ եղած է, սրինգով հասկացուց Պառտէին ու Պառազին որ հօտը հաւաքեն, բերեն արեգին:

Հօտը իւր տեղէն չշարժեցաւ, իսկ նա սրինգը դրեց բերնին, շարունակ կը փչէր, տեսաւ չեն շարժիր, ասաց:

—Այս օր իմ հօտին մի փորձանք պատահած կը լինի:

Ելաւ գնաց հօտի մօտ որ մի մասն ուռած է. մի մասը սատկած. մի մասը կը ուրայ. փոքր մասն ևս կը բառաչէ:

Մեռածը մեռած էր, մեռնելու եղողն ևս մորթեց:

Եօթ հազար ոչխարէն հազար հատ միայն մնաց:

Սեռև հովիկ գնաց աղբիւրի վերան, լուացուեցաւ, նստաւ:

## ԹԱ.

## Սեռեւ արինգով թուչուն ու գազան կը հրաւիրէ դիակներու վերայ

Սեռև հովիկ երկու ագռաւ ունէր, որ միշտ իւր հետը կերթային. եթէ պատառող գազան կամ մի գող պատահէր, այս ագռաւները կռկռոց հանելով Սեռևին կը յայտնէին, Սեռևն ևս Պառտէին ու Պառազին կը յայտնէր՝ Պառտէն ու Պառազն ևս Առիւծին ու Ընձին:

Սեռև սրինգը դրեց բերնին, սկսաւ ածել, ագռաւները հասկացան Սեռևի միտքը. թռան անտառի բարձր ծառներու վերան և ձայն ձգեցին, փոքր ժամանակի մէջ անհաշիւ ագռաւներու ջոկերը հաւաքուեց դիակներու վերան, կերան ու գնացին:

Սեռև հովիկ սրինգով սկսեց ածել—գնա՛, ագռա՛ւ. լուր տուր կռտոտին, որ հաւաքէ իւր ազգականն ու դայ:

Ագռաւները բարձրացան երկնից կէսը, ձիու նման խրախնջացին. հազար—հազար կռտոտներ միացան, հաւաքուեցան, եկան:

Դարձեալ սրինգով—երգելով ասաց:—Գնա՛, եղբայր լուտոր ագռաւ, գնա՛, յայտնէ Զեչելչերքեզին, թող առնէ իւր ազգն ու ազգականը, դայ:



Հաւաքուեցան որչափ Զեչել չերքեզ կայէն, կերան ու գնացին:

—Գնա՛, առիւծ եղբայր, առ ցեղդ—մեղդ, արի՛:

—Գնա՛, ինձ եղբայր, լուր տուր ազգիդ որ գան:

—Գնացէ՛ք, Պառտէ ու Պառազ, որչափ ցեղ ու մեղ ունէք, բերէք:

Առիւծներ եկան, կերան ու գնացին. ապա ինձեր ժողովեցան իւրեանց փորը յագեցուցին ու գնացին. ապա շուն ու մուն. իսկ մի արջ ոչխարի հոտը առած, հեռուն դտնուած ծառատոտանի մէջէն կը նայէր, չէր համարձակիր առիւծի երկիւղէն մօտենար, Սեռև դարձեալ փչեց:—Գնա՛, արջ եղբայր, առ, արի՛, քո ազգն ու մազդը:

Նրանք ևս եկան, կերան ու գնացին:

Մօտեցան հինգ դայլ, ծառներու մէջոցէն նայեցին, ասացին:

—Թոյլ տուր մեզ, Սեռև հովիկ, մենք ևս մեր բաժինն ունենանք. ցարդ Պառտէին ու Պառազին երկիւղէն քո հօտին ոչ մի վնաս չենք տուած, քո հօտին հեռէն անգամ չենք նայած:

Սեռև հրամայեց, նրանք ևս գնացին իւրեանց ցեղն ու ցեղակիցը բերին, կերան ու գնացին:

Սեռև տեսաւ մի աղուէս, այս այն կողմ կը թռնի, սակայն երկիւղէն չմօտենար. ասաց:

—Ի՞նչու կը բունբունաս, սիրո՛ւն աղուէս. գնա՛ ազգդ ու ազգականդ, դրացիներդ ու խնամիներդ, մեծ ու փոքր առ, բեր:

Տեսաւ Սամոյրն ասաց:—Արի՛, ասկի թագաւոր:

Սամոյրը ձայն ձգեց մեծ ու փոքր հպարտ—հպարտ եկան. կերան ու գնացին:

Երկու անտառային երախայք մերկ անգամ կանգնեցան Սեռևի առաջ, Սեռև սրինգով հրամայեց. նրանք ևս գնացին ինչ որ վայրենիներ կայէն, բերին, կերան, գնացին:

Եկաւ նաև այն հսկայ մազոտ պառաւը, նա շուտով

պէս գլորուելով եկաւ, իւր առջև կանգնեցաւ:

Այնչափ դիակներէն մի խոյլ դիակ մնացած էր, այն ևս իւր առիւծի ու ընձի համար պահած էր, տուեց պառաւին:

Սեռևին մնաց միայն հազար հատ ոչխար, առիւծն ու ինձը, Պօռաէն ու Պառաղը. ոտի կանգնեցաւ, օրինգն ածեց ու ուղղեցաւ դէպի լերան կուրծքն. մի աղբիւրի վերան դադար առաւ. ուր ամբողջ հօտն այդ տեղ ջուր խմեց ու նստաւ:

Այդ տեղ շատ ու քիչ նստան, տեսան մի մարդ կդայ դէպի ջուրը, ջուրը լցնց, տուեց այդ մարդուն ու հարցուց:

—Մարդ Աստուծոյ, ո՞ւստի կդաս, ո՞ւր կերթաս:

—Խռնեկու եմ, Խռնեկ կերթամ:

—Արդեօք կը ճանաչե՞ս Փօթը, Պէճօ տատան:

—Այո՛, ինչպէս չէ, Փօթը ինձ կնքահայրն՝ իսկ Պէճօն խնամի է:

—Գնա՛, յայտնէ Փօթին թէ մեր հօտը ամբողջ մեռաւ. միայն հազար հատ մնաց. կասես որ այն հրէան իրենց գիւղէն դուրս անեն՝ այն եղաւ մեր հօտի կոտորուելու պատճառ. վասն զի անօթի մնացին, երբ կանանչ ծիլն արածեցին, հիւանդացան ու մեռան:

Խռնեկցիք առաջ փառաջ գիւղէն դուրս արին հրէին: [1])

Փօթն ու իւր կինը վրանը բարձան, գնացին Մուզուրայ Ջրի վերան նստան. այն տեղ վրանը կանգնեցին, ուր լուր առին Սեռևէն:

Փօթ ձեռներն առ Աստուած պարզեց, աղօթեց:

—Փառք քեզ Աստուած՝ Սեռևս ողջ և առողջ է. Պօռաէն ու Պառաղ. առիւծն ու ինձը կան, հազար մագին ևս կապրին, եթէ իւրաքանչիւրը զոյգ ծնի, դարձեալ երեք հօտ կունենամ:

Փօթ ոպասեց հինգ վեց օր, Սեռևս չեկաւ Ջրի վերան:

—Երկիր, Փօ՛թ, ասաց կինը, հեծիր Նարինջդ. գնա՛. տե՛ս, Սեռևն ինչ վիճակի մէջ է:

---

[1]) Այժմ ևս Զարսանճաղցիք կասեն, «որ գիւղը հրեա մնաւ, այն գիւղն աւերակ կը դառնայ»:



Փօթ հեծաւ Նարինջն՝ այս այն կողմ շատ որոնեց. վերջապէս Ծառգովիկ գնաց, գտաւ. տեսաւ զՍեռևս հովիկ,—ինչ տեսնէ—Սեռևն ու շներ, առիւծն ու ինձ անօթի և ուշաթափ եղած են, հազիւ հազ Սեռևս սունկերը կը հաւաքէր իւր շուրջը գտնուած ծառներու վերայէն, կերկէր թէ ինքը, թէ Պօռաէին ու Պառաղին և թէ առիւծին ու ընձին կը կերցնէր:

Սեռևս որ զՓօթ տեսաւ, փղձկեցաւ սիրտը, լացաւ:

—Զ՛ուակս, ասաց հայրն, ինչու կուլաս, այն վեց հազար ոչխարները քեզ համար զոհ եղան, բաւական է ինձ որ դուողջ-առողջ ես, Պօռաէն ու Պառաղ, առիւծն ու ինձ կանուրեմն ամբողջ այս երկիրը—Դերսիմ խմս է:

Փօթի բերած պաշարը կերան, հոգի առին և տակաւառ տակաւ հօտը քշեցին—տարին Մուզուրայ Ջրի վերայ:

Մի շաբաթ մնաց, Աստուած լսեց Փօթի աղօթքն, ոչխարները սկսան զոյգ—զոյգ ծնիլ:

---

## ԻԲ.

## Պառաւ մի կը նախահնձի Սեռևի վերայ

Կամախի Քեալ Թաղաւորն այդ վայրը մի վրան ունէր, այդ վրանի մէջ մի չարաշիրտ, խարդախ պառաւ կար, որ հինգ տղայ ունէր, երկուքը թաղաւորի մօտ խնամ—միւս կը լէկէին, երեքն ևս թաղաւորի հօտը կը պահպանէին. իրենց մօտն տաս հատ մագի տուած՝ ու արձակած էին իրենց մօտէն, իրենք ևս երբեմն գիւղը գնալով թաղաւորի համար տուրք կը հաւաքէին:

Այս պառաւը կը մտածէր,—Սեռևի մագինները զոյգ կը ծնին, իմ մագիները պէտք է երեք—երեք ծնին: Բայց աբի՛, տես որ պառաւի մագիներու հինգը ծնաւ, հինգը ոտերէ մնաց.—ինչ արաւ պառաւը,—չարն աւելի ասոտկոցաւ իւր վիրի մէջ:

—Ինձ տասը մագի կայ, չեմ կարող պահել, Սեռևս եօթը հազարը կը պահէ՝ նաև ամեն կերպով որոց պիտոյքը կը հոգայ, իսկ նորա հայրն ու մայրն ըստ ամենայնի հանգիստ նստած են, բայց իմ հինգ որդիքն երբէք ինձ չեն օգնէր:

Պառաւի նախանձն աւելի սատակացաւ, երբ տեսաւ որ Սեռաւ երբ սրինգ կածէր, ամբողջ հօտը իրեն կը հետեւէր, երբ մի այլ եղանակ կածէր, հօտը կը տարածուէր արածելու, ուրիշ մի եղանակով կը հաւաքուէր ջրի վերայ ջուր խմելու, մի այլ եղանակով կը հրաւիրէր մակաղելու, որոճալու, երբեմն ևս այնպէս քաղցր կածէր, որ հօտն արածիլ, որոճալ, քնիլ թոյլ տուած՝ ժամերով ոտի վերայ կանգնած՝ ուշադիր կը լսէին:

—Ա՜խ, ես ի՞նչ հնարք գտնեմ. Սեռաւն իւր հօրից՝ մօրից բաժանեմ, որպէս զի նրա հայրն ու մայրն ևս ինձպէս չարչարուին, որ իմ սիրտը հանգստանայ:

Օրերէն մէկ օր՝ երբ կէս օր էր, Սեռաւ իւր հօտը ջրի վերան բերած, ուր մակաղած էր, պառաւը դուրս եկաւ իւր վրանէն, ձեռքն ետևը կապեց, կուզ—կուզ գնաց դէպի Սեռաւի վրանը:—Բարև քեզ, սի՛րուն Սեռաւիկ, ասաց:

—Աստուծոյ բարին, մայրի՛կ, բարով հաղար բարով, հրամայէ՛, այս թաղիքի վերանի՛ն տա, հանգստացիր, ծեր կինես:

Պառաւը նստաւ, աչքը գոցեց, բերանը բացաւ և կըզակը թուլացուց, սկսաւ խօսիլ:

—Սի՛րուն Սեռաւիկ, այդ ի՞նչ է քո վիճակ, մեթէ դու հոգի՞ պիտի լինէիր, այս ի՞նչ թշուառ կեանք է, ընկած ես լեռ ու ձոր, կեանքդ կը փչացնես, դու աղջիկ և այդպէս սիրուն լինես, ի՞նչ է պատճառն որ մտած ես տղի կերպարանքի, կը չարչարուիս ամառ, ձմեռ, դարուն, աշուն, հովին ու անձրևին, կարկուտին, ձիւնին ու ըրին առաջը, չե՞ս գիտեր ուրիշ քեզ նման աղջիկները ի՞նչ քաղցր կեանք կը վարեն, քո հայրն ու մայրն եթէ քո վերան գութ ունենային, քեզ ի՞նչու ըսորուվին միս միայնակ վայրերի անտառներու ու լեռներու մէջ թոյլ պիտի տային, քեզ ի՞նչու պիտի տային կռուարար Լուսիկին, կռիւը բան դորձ արած է, մի օր հանգիստ օր չպիտի տայ քեզ՝ մի օր ևս պատերազմի մէջ պիտի մեռնի. այժմ ևս լսած ես որ մի մեծ վէրք ստացած է, կամ ապրի կամ մեռնի, դու ևս նորա յուսով քո քաղցր վայելչութենէն պիտի զրկուիս, հաղար—հաղար ափսոս քեզի պէս սիրուն աղջիկան:



Պառաւն երբ ասաց «Լուսիկ վիրաւոր է», Սեռաւ ընկըղմեցաւ խոր մտածման մէջ, իւր սիրտն ևս վիրաւորեցաւ:

—Ա՜խ Աստուած, ասաց, այս ինչ վիճակ է, Լուսիկն ոչ լուր կայ, ոչ տեղեկութիւն, ո՛չ գալող կայ, ոչ գնացող, այո՛, այս երկար միջոց եղաւ զինքը չեմ տեսած, ճիշդ վիրաւորը է, որ նա չգար, ապա թէ ոչ այժմ հինգ անգամ եկած, գնացած լինելու էր, ի՞նչ ասեմ իմ հօրն ու մօրը, որ մի աւուր մէջ կատարուելիք մի բանին՝ հինգ տարի միջոց դրին:

Պառաւն ելաւ, դարձաւ, դընկալ—դընկալ գնաց դէպի վրաններն՝ ուր որ պատահեցաւ, սովորեցոյց:—Երբ Սեռաւ Լուսիկի վերան հարցում անէ, ասացէք թէ վիրաւոր է:

Պառաւը վրաններու մէջ պառաւական բժշկութիւն կանէր, թուղթ կը բանար, հմայութիւն կանէր, այս առթիւ ամեն վրան մուտք ու ելք ունէր, ամեն վրանի մէջ պատիւ ունէր, որպէս համար ամենն ևս խօսք տուին:

Սեռաւ հովիկ՝ որ մէկից հարցուց Լուսիկի մասին, ամենն ևս ասացին—վիրաւոր է: Սեռաւ քաշեց իւր հօտը դէպի տար, այդ տեղ երկու մարդ իրեն պատահեցան, բարև տուին, ասացին,—հովի՛ւ եղբայր, անօթի՞ ենք, հեռու տեղէն եկած ենք, մեզ մի քիչ կաթ տուր, ուտենք:

Սեռաւ անմիջապէս կթոցն առաւ, վազնելով գնաց, մի լաւ կթան մագի բռնեց, կթեց, տաք տաք կաթի մէջ հաց փրթեց, տուեց այդ երկու մարդոց, որք կերան, ելան պիտի գնային:

—Ո՞ւտի կգաք, ո՞ւր կերթաք, հարցուց Սեռաւ հովիկ:

—Բերդիս եկանք:

—Բերդակ ի՞նչ կայ, ի՞նչ լսեցիք, ի՞նչ թոյլ տուիք:

—Մի բան լսեցինք, չենք գիտեր, ուզիղ է, սուտ է:

—Լուսիկի՞ վերայ:

—Քաղաքի մարդիկ բերդը կը բարձրանային, կիջնային:

—Ի՞նչ կար:

—Հարցուցինք, այս ինչ եղած է խումբ խումբ վեր կը բարձրանան ու կիջնին:

—Է՛, ի՞նչ ասացին:

—Ասացին, թագաւորը հիւանդ է:

—Է՛, ինչ պատճառաւ հիւանդացած է, չհասկացաք։

—Այո, Քավէտ լեռն որսի գնացած էր իւր թիկնապահներու հետ։ մի այծեամի եաւէն կը պնդէ, և թիկնապահներն աջ ու ձախ կը բաժանէ, որ որսը մէջ տեղ մնայ, ինք որսայ, որսը կիջնայ մի նեղ ժայռի մէջ, ինքն ևս եաւէն կիջնայ, այդ տեղ մի քուռն գնդակ կը լեցնէ հրացանի մէջ, որսի վերան կրակ կտայ, հրացանը կը պայթի, ինք կը վիրաւորի։

Այդ երկու մարդը քանի քայլ հեռացան, սկսան իրարու ականջն ի վայր փսփսալ և ասել, որպէս թէ լսելի անել չտան, «այժմ մեռած կը լինի»։ բայց Սեռեռ ականջները սրած, ամենափոքր փսփսոց անգամ կը լսէր։

Այժմ Սեռեռդ ինչ պիտի անէ, նա նախապէս լսած էր, այժմ ևս բոլորովին անծանօթ մարդէ լսելով հաւատաց, նա երբէք մտքէն անգամ չէր անցնէր թէ այս ամենը պառաւին հնարքներն են, այլ ի խորոց խոցեցաւ, սկսաւ խիստ առ խիստ ծխել։

—Ես ոչ երկինքն և ոչ երկիրն եմ, ասաց, հօտը թոյլ տուեց, գնաց երկու ժամ հեռ ին տեսնուող ճանապարհի մէջ տեղը կանգնեցաւ, տեսաւ մի խումբ զանգով Ջորի կգայ, առիւծը ճանապարհին աջն՝ ինձը ձախ կողմը բռնեցին, կարաւանը եկաւ, կանգնեցաւ նրանց երկիւղէն։

—Իմ հաւատարիմ առիւծ ու ինձ, հանդիստ նստեցէք ձեր տեղն, ես ցաւեր ունիմ, լուր քաղելու եկած եմ։

Կարաւանապետը ձին քշեց, հասաւ Սեռեռին, բարև տուեց։—Աստուծոյ բարին գայ վերադ, ո՛վ բարի մարդ, ասա, խնդրեմ, ո՞ւստի կգաս, ո՞ւր կը գնաս։

—Բերդակու քաղաքէն կգամ, Մեղկերա կը գնամ։

Սեռեռ ինքն իրեն կը մտածէր թէ այս մարդը ճշդիւ լուր պիտի տայ։

—Բերդակ ո՞ր պանդոկը իջևանած էիք, հարցուց։

—Բերդի առաջ Մանչուլ օղլուն 1) պանդոկն։

1) Մանչուլ օղլի, իբր pus Միհնաս բաբարի, ի վաղուց անտի կան, այժմ փոխադրուած են ի Խարբերդ, եւ մեծ գերդաստան են։



—Ի՞նչ լուր ունիս, Բերդակ գնացող, եկող, մեռնող, ապրող կա՞յ։

—Ոչ մի բան չլսեցինք, լուր տալու արժանի մի բան չկայ, միայն առաւօտեան երբ մենք մեր կարաւանը բառնալու հետ էինք, թագաւորն իւր քառասուն թիկնապահներով բերդէն իջաւ, ձիանք հեծաւ, գնացին սուրը Տիկին։

Սեռեռի սիրտը հանգստացաւ, քաղցը շունչ մի քաշեց, մտածեց թէ այդ մարդուն ինչ տայ։ Կարաւանապետը հարցուց։—Հովի՛ւ, հօտդ ինչ տեղ կը դտնուի։

—Հանդէպի սարի կրծքի վերան կարածեն։

—Կարելի է ինձ մի ոչխար տայիր, այս երեկոյին պանդոկ չկայ մեր առաջ, Ծառ—դովիկ պիտի իջևանենք, մեր Ջորեպաններուն խոստացած եմ մի ոչխար։

—Կանդնէ, այս վայրկենին քո հրամանը կատարեմ, ասաց։

Սեռեռ հովիկ որինդը բերանը դրեց, երբ սկսաւ ածել, ամբողջ հօտը սուրհանդակի պէս քարի, ձորի, մացառի վերևէն թռնելով Սեռեռի շուրջը բռնեցին։

Կարաւանապետն իւր ծխախոտի քսակն հանեց, տուեց Սեռեռին։

—Ա՛ռ, ծխէ, այս Սամսոնի լաւ ծխախոտէն է, իմ ամբողջ բեռն ևս ծխախոտ է, ուզղակի Սամսոնէ կը բերեմ։

—Ցարդելի՛ կարաւանապետ, քո հաւանած ոչխարներէն մին քեզ կընծայեմ, որոշէ, տար։

Կարաւանապետը մի մագու վիզ բռնեց, ուզեց տանիլ, սակայն մագին չուզեց Սեռեռէն բաժանուիլ, որով մոռթեցին, տուին կարաւանապետին, որ ձգեց ձիու վերան ու քշեց գնաց։

Սեռեռի սիրտը հանդիստ էր մինչև վեց օր, վեցերորդ օրը պառաւը լսեց որ Սեռեռ ուրախ էր, փայտ մի առաւ իւր ձեռքը, մէկ ձեռքն եաւ կոթնցուցած, մի սով փայտի կռթնելով կուզէ կուզ մռթմռթալով գնաց, դտաւ Սեռեռին,—բարև, որդի՛, ասաց։

Աստուծոյ բարին, մայրիկ, դու իմ աչքերուս, իմ զբաղուս եկար։

—Սեմա՛, ասաց, արդեօք քո հայրն ու մայրը մի լուր չառի՞ն:

—Չէ՛, ոչ մի լուր չունինք, ասաց:

—Այ որդի՛, ասաց, դիտես, այս ինչ ժամանակի հասած ենք, այժմեան հայրն ու մայրն երբէք որդւոց վերայ հոգ չեն տանէր, երենք ևս կը ցանկան որ լուր չգայ, Լուսիկ մեռնի, որպէս զի դու միշտ այսպէս դառն աշխատանքով գիշեր, ցերեկ նրանց համար աշխատես, տասը հովուի գործ կատարես՝ մաշած թաղիքի մէջ փաթաթուած: Եթէ քո տեղը մի այլ հովիւ լինէր, օրական մի ոչխար կը մորթէր, կուտէր, օրական մի ոչխար ևս կը վաճառէր ու դրամը գրպանը կը դնէր, էգ գառները բարեկամաց կը բաժանէր. շաբաթն մի զոյգ կոշիկ և դուլպայ պիտի հագնէր, ամսուան մէջ մի քօլոգ և երկու ամսուան մի շալ պիտի փոխէր: Այլ ևս որ մինն ասեմ, քո հօրն ու մօր հաշուոյն կգայ որ դու այդպէս կեանք վարես, ընդհանուր աշխարհը ձէնձընուած է թէ «Լուսիկ մեռած է», իսկ քո ծնողքը չեն հոգ անգամ աներ, չեն մտածեր թէ երենց աղջիկն այնքան ընկղմած է մտատանջութեան մէջ. շուարած է, հօրը թոյլ տայ, չլինիր, իւր որսի ցաւը ծնողաց յայտնելը կամաչէ: Սեմա՛, շարունակեց պառաւը. քո հայրն ու մայրը հաճութիւն չունին որ դու ամուսնանաս, դու ափսոս աղջիկ ես, եթէ լնձ լռես, ես քո վերան խղճահարելով կասեմ: Սեմա՛, ես հինգ տղայ ունիմ, որոց համար երբէք չեմ խօսիր թէ արի՛, ա՛ռ, այլոց պէս քեզ չեմ խափեր, դու քո ճակատագրովդ թաղաւորի յատկացուած ես և թաղուհի ևս լինելու յարմարութիւն ունիս, արի՛, մեր թաղաւորի որդւոյն առ:

Սեմայի սիրտը քիչ մնաց պայթէր, աչքերը մութը պատեց:

Սեմա դարձեալ գնաց, ինչ մարդու որ պատահեցաւ, հարցուց, ամենն ևնոյն խօսքը կրկնեցին թէ «Լուսիկ մեռած է»:

Սեմայի հոգը ոտոտացաւ, հօրը քշեց հանեց Մուղուրայ լեռան գագաթն. ուր հազար վրան կար, թոյլ տուեց հօրը, մի առ մի վրաններին շրջեցաւ, ամեն մարդէ հարցուփորձ արաւ, ամեն մարդ, տղայ, հարս ու աղջիկ «այո՛, Լուսիկ մեռած է», ասացին:



Սեմա յուսահատ դարձաւ, մտաւ պառաւի վրանն:

—Բարև, մայրի՛կ, ասաց:

—Հայ Աստուծոյ բարին, Սեմա՛, ես աչքերուդ մեռնեմ, չորանամ քեզ համար, քեզ համար զոհ լինիմ, ա՞ւսոսկ կդաս:

—Վրանները շրջեցայ, ուսոսկ որ հարցուցի, ամենն ևս ասացին, «այո՛, ուղիղ է»:

—Ես քո այն մարգարիտ աչքերուդ զոհ գնամ, Սե՛մա, քո հայրն ու մայրն ե՞րբ լնձ չտան հոգ ու խնամք կը տանեն քո վերան,

Սեմա մի ջուր խմեց, գնաց. Նորա ցաւը շատացաւ, նա երբ ա՛խ—ա՛խ, հառաչանք կարձակէր, կարծը քարերը խրդճահար կը պատառուէին:

Սեմա իւր հառաչանքներով աշխարհ լցեց. ուշաթափ ընկաւ, երբ զգաստացաւ, սկսաւ խորհիլ և ասել—արդեօք այս պառաւը չլինի՞ իմ ոտաց ներքև ոսպօն դնելու կաշխատի, արդեօք այս ամենը Նորա հնարագիտութիւնը չէ՞, ես ինչպէս ոտոյգն իմանամ, վասն զի ոչ գնացող կայ և ոչ եկող:

Այ պա՛ռաւ, դու վչանաս, պա՛ռաւ, պառաւ իւր յերիւրած սուտեր իրականացած դատ, իւր վրանը մօտեցուց Սեմայի վրանին, իւր տասը մագին ևս խառնեց Սեմայի հօտին, ուր մնաց մինչև համբարձման օրը.

Մի օր հօտը պառաւի հետ բարձրացուցին Մուղուրայ ջրի սկսած վայրն, ուր ևս կային Կամախի Քեռ թագաւորի հովիւները, պառաւը որանց մէջտեղով լուր յղեց այդ թագաւորին:—Արի՛, քեզ համար մի գեղեցիկ աղջիկ եմ գտած, աղջիկ որ արեգակին կասէ «մի ծագիր, ես պիտի ծագիմ, լուսնին կասէ, դուրս մի գար, ես գալու եմ», աչքերը մարգարիտ, մազերն ոսկեթել, ատամները ոսատի, գիշեր ցերեկ այս լեռներուն լոյս կտայ. աշխարհի մէջ քեզ միմիայն յարմար Սեմայն է և ոչ այլ մէկը:

## ԻԳ.

## Քեռ թագաւոր Սեմայը փախցնել կը խորհի

Կամախի թագաւորի տղան Քեռ՝ ինը—տասը ձիաւորը հե-

տը առած՝ ո՞ւր ես Մուղուրայ գլուխ, ասաց, քշեց եկաւ։ Այն մինչոցին եկաւ որ բուն համբարձման օրն էր, երեք հարիւր աղջիկ ծաղիկներ քաղած եօթ աղբիւրէ ջուր բերած, վիճակի վարչն են զարդարած՝ որ վիճակ հանեն. Սեռևն ևս իւր առիւծն ու ինձը հետը առած, եօթ լեռ շրջած, եօթ փունջ ծաղիկ էր հաւաքած, եօթ աղբիւրէն ջուր առած, առիւծի ու ընձի քամակն էր կապած, բերած խառնուած էր աղջիկներուն որ համբարձման տօն կատարէին։

Աղջիկներն թող իրեն պատրաստութեան հետ լինին Սեռևի հետ։

Զար պառաւն իւր նման մի աղջիկ ունէր, իւր աղջկան լաւ լաւ շորեր հագուցած՝ նորա հրահանգ տուած էր ուր որ Սեռևը նստի, ինքը նորա կուշտը նստի, նրանից չբաժանվի. ոչ ոքի հետ հաց չուտէ, այլ միայն Սեռևի հետ և նորա թասով ջուր խմէ, որպէս զի տակաւ առ տակաւ Սեռևին սիրելի դառնայ։

Աղջիկները խմբուեցան մի վայր, սկսան իրենց տօնը կատարել, տեսան որ լեռան այն կողմէն տասը ձիաւոր երևացին և եկան դէպի իրենց կողմը. պառաւի աղջիկը կը ճանաչէր. ոտի կանգնեցաւ. Սեռև իւր շորերը չէր փոխած, հովուական կերպարանքի մէջ էր, թաղիքը փռած իւր ներքևն ու վերանոտած էր. վիճակ չպիտի խաղար. ընկերներն ասացին։—Ինչու չես խաղար։

Մի աղջիկ ասաց։—Կասեն թէ նշանածը մեռած է։

Պառաւին աղջիկն ասաց։—Բերդակու թագաւորի տղան թող չլինի. լինի Կամախու թագաւորի տղան. ինչո՞ւ պիտի չխաղայ։

Պառաւի աղջիկն որ այդպէս ասաց. Սեռևին աչքերն արցունքով լճացաւ. արցունքի միջէն մարգարտափայլ աչքերն աւելի շողշողացին—կարմրագոյն, այնպէս որ տեսնողը կը կարծէր թէ արցունք չէ կը կաթէ, այլ կարմիր արիւն։

Քել թագաւոր ձիէն լջաւ, աղջիկներու շուրջը մտան եկաւ, եկաւ Սեռևի դէմը կանգնեցաւ. ինքն իրեն մտածեց. ասաց։

—Ահա ամենագեղեցիկ աղջիկ, սակայն կերևի որա



տէրն շատ աղքատ է որ շոր—մոր չունի։

Այն խոսքերն որ Սեռևին ականջին հասաւ, Սեռև գլուխը բարձրացոյց, թագաւորի երեսը նայեց։

Թագաւորն որ ուղղակի տեսաւ նորա աչքերն ու դէմքը, ասաց իւր վազիրին։—Վազիր՝ կը նայի՞ս այս աղջկան թէ ո՛րչափ գեղեցիկ է, սակայն միայն դէմքը. շատ լաւ կը լինէր մարդ սորա գլուխը կտրէր, վերցնէր. զինք մի կողմ ձգեր։

Թագաւոր դարձեալ նայեցաւ Սեռևի դէմքին. այս անգամին խելքը գնաց, մինչոց մի ուշաթափ եղաւ, ապա գնաց պառաւի վրանը։

Պառաւն ասաց։—Տեսար Սեռև հովիկն. ո՛րպիսի աղջիկ մէ։

—Տեսայ, պառաւ, ասածէդ քառասուն ևս աւել է. քո հոգուն մատաղ, պառաւ, այդ աղջիկն ինձ համար պիտի ուզես։

—Դորա նշանը Լուսիկ թագաւորին հետ դրուած է, իւր հօրն ու մօր ասել չլինիր. այլ մի հնարով զինքը համոզեմ, որ առնես, փախցնես։

Է՛, ինչ տեղ կընստի, կանգնի, ասաց թագաւորը։

—Ես իմ աղջիկս նորա մօտ դրած եմ. նա շատ անգամ մեր վրանը կը յաճախէ. դու կերթաս մեր շուրջը գըտնուած վրաններու մէկու մէջ կը մնաս. երբ եկաւ, քեզ իմաց կտամ. եթէ յօժար կամօք հետդ եկաւ, կառնես կը գընաս. երբ քեզ առնել չյօժարացաւ, նորա հնարքն ևս գիտեմ, դարձեալ քեզ կը յայտնեմ։

Քել թագաւոր խպահ մտաւ։

Պառաւի աղջիկն ևս ընկած կը գնար Սեռևի հետ, նաուր կը գնար սա ևս նորանից չէր բաժանուէր, ամեն ճիգ կը թափէր համոզելու որ Սեռև թոյլ տայ մեռած մարդու վրայ ունեցած սէրն, սիրէ Քել թագաւորին։

---

## ԹԴ.

## Սեռևը փախցնելու փորձ

Սատանայ պառաւի աղջիկը թէև ամեն հնար բանեցուց, տեսաւ հնար չկայ համոզելու, տարաւ իրենց վրանը,

ուը դարանուած էր ամեն ինչ։ Սեռև մտաւ ներս։—բարև քեզ, մայրիկ, ասաց պառաւին։

—Աստուծոյ բարին, իմ անգին Սեռևս, քո քայլած ճանապարհներուն ես մատաղ լինիմ, դու իմ աչքերուս ու գլխուս վերայ եկար...։

Պառաւը նորա վերան դուրդուրալով բերեց հաւկիթ, հաց և փրթօն շինեց, դրեց առջևն որ ուտէ. իւր աղջիկն ևս յղեց Ջրի։

Աղջիկն իւր մօրմէն նշմարանքով իմացած էր ամեն ինչ, կուժը դուրսը վայր դրաւ. ուղղակի գնաց Քելին յայտնեց։ 1)

Քել յանկարծ դռնէն ներս մտաւ այն ժամանակ, որ պառաւը նստած էր Սեռևի հետ, նոր սկսելու էին հաց ուտելու։

—Բարև, պառաւ, ասաց Քել. թաղա զոքանչս ո՛ր չափ բաղդաւոր է, որ սեղանի վերան պատահեցայ. արդեօք տեսնենք, աղջիկն ևս բաղդաւոր կը լինի՞, կը յօժարի ինձ հետ ամուսնանալ։

Սեռև դեռ մի պատառ բերանը դրած կուլ տալու վերայ էր, երբ սոյն խոսքերը լսեց, պատառը մնաց կոկորդի մէջ. քիչ մնաց պիտի խեղդուեր...։ Մտածեց ինքն իրեն—ահա յայտնի եղաւ որ պառաւի հնարքն է որ զիս այստեղ բերած են։

Քել հանեց մի ոսկի մատանի, տուեց պառաւին, պառաւն ամեն ջանք արաւ որ անցնէր Սեռևի մատն, Սեռև հանեց ձգեց դէպի դուրս, ասաց Քելին։—Գնա՛, գնա քո բաղդն Աստուծմէ խնդրէ. հեռացիր, քանի որ աչքերդ արտասուելու սկսած չեն, գնա, քանի ողջես, գնա, կրկին առջևէս, եթէ Լուսիկ թաղաւոր մեռած է, թող մեռնի, բայց ես մարդու չեմ հաւատար, պիտի գնամ, նորա գերեզմանը փորեմ, եթէ նորա մարմինը փտած է, ոսկերոտիք տեղը կը լինին, իմ նշանը նորա մատն է, նա է իմ նշանածն, ես նորան եմ, նա իմս է, եթէ նա իրօք մեռած է, աւելի լաւ կը համարիմ հոլուութեամբ կեանք վարել, քան թէ կատուի ու շան միս կերցնել։

1) Կամախու մարդիկ իվաղուց անտի խարդախ են, կասէր Միհնաս թարար։



Քել այս խօսքերէն առնուեցաւ, քիչ մնաց կաթուածահար լինէր, ելաւ դուրս, պառաւին ասաց։—քեզ տեսնեմ, պառաւ, դու շատ հնարներ գիտես, մի թունդ դեղ տուր, խելաթափ լինի, թերևս ձիու վերայ առնենք, տանենք։

Պառաւը դեղը պատրաստեց, իբրև օշարակ տուեց Սեռևին. Սեռև արդէն մտատանջութենէ թմրած էր, դեղն երբ խմեց, բոլորովին ուշաթափ եղաւ, որպէս մեռած ընկաւ։

Պառաւի աղջիկը լուր յղեց Քելին, Քել եկաւ, թաղիքի մէջ փաթութեց, դրաւ ձիու վերան, առաւ ու գնաց։

Առիւծն ու ինձը հեռացան նորա։

Շատ ու քիչ գնացին, հասան մի սառն աղբիւրի, աղբիւրի զովութիւնը Սեռևի երեսին երբ զարկեց, զգաստացաւ, ելաւ նստաւ Սեռև, — Օ՜ֆ, արաւ, շուրջը նայեցաւ, ես այս ո՞ւստի կգամ, ո՛ւր կգնամ, ասաց, ինքնաւ աղբիւրի վերան լուացուելու, նոր զգաց թէ իւր գլխէն ինչ անցք անցած է, առիւծին ու ընձին ասաց։— Հաղար ափսոս, քիւր ափսոս որ ես զձեզ այնչափ խնամքով պահպանեցի, ձեզի լուացի, ճմուռ, եղ ու միս կերցուցի, իմ թաղիքը ձեր տակը ձգեցի, որպէս զի այս սև աւուրը մէջ այդպէս պահէք ձեր տէրը։

Քել հեծաւ իւր ձին, ձիաւորները բռնեցին զՍեռև, որ ձիու վերան դնեն։—Ո՛վ առիւծ ու ինձ. ինչ աւուր համար էք, հասէ՛ք, գոռաց Սեռև։

Սեռև դեռ խօսքը չէր աւարտած, առիւծն ու ինձը հասան, թէ զձիաւորներն և թէ ձիերը յօշոտեցին, աղբիւրի շուրջը փռեցին։

Քե՛լ, քեզ Քել կասեմ, նորա ձին լաւ էր, զգաց իւր գլխուն դալիքը, թոյլ տուեց ու փախաւ։

Սեռև առաւ առիւծն ու ինձ, եկաւ հասաւ իւր հօտին և պառաւի մագիներէն օրական մի կամ երկու հատ առիւծին ու ընձին բաժին հանեց։

Պառաւն այլ ևս չէր կարող մօտենալ Սեռևին, նա լսեց որ իւր մագիները գաղանաց բաժին արած է, ոխակալութեամբ լցուած՝ գրեց Քել թաղաւորին։—Ով Քել թագաւոր՝ դու մի թագաւոր լինիս, այս մի տկար հովիւ, այն ևս աղջիկ լինի, չէ ես անշնչացուցի, քեզ յանձնեցի,

դու չկարողացար այս լաւ պատառն ուտել. այլ ևս քո քաջութիւնն ու քո թագաւորութիւնն ինչ բանի պէտք են, դու ինչ աւուր համար ես, լսողն ի՞նչ կասէ, չասեր արդեօք երբ մի տկար աղջիկ նորան յաղթէ, այլ ևս ինչպէս կարող է թագաւորութիւն անել:

## ԽԵ.

## Սեսեի համար մեծ պատերազմ կը բացուի

Քեռ ոխակալութեամբ լցուած, վրացաւ, երեք օր, երեք գիշեր հաց կոչուած բանը չկերաւ, մտածեց այս հարուածի տակէն ինչ անեմ, դուրս գամ, Պառաւին գրեց:— Սեսեւ որ տեղն է, ինձ յայտնէ, այս անգամին կամ կը մեռնեմ, կամ նորա գլուխը կը կտրեմ և կամ կառնեմ, կը բերեմ:

Քեռ ամբողջ Կամախու դարբինները կանչեց, որոց քառասուն բեռ շղթայ շինել տուեց, ինչ որ Իւրեան հպատակ կար և որն որ կարող էր զէնք վերցնել, առաւ իւր հետ, ընկաւ ճանապարհ և պառաւին ևս լուր յղեց:—«Սեսեւ ի՞նչ տեղ կը գտնուի»:

Պառաւն ևս անմիջապէս գրով մի պատասխանեց:— «Մուղուրայ լեռնէն իւր վրանը բարցաՀ՝ հօտն ևս հետը առած՝ քաշուած է Խոզաթու լեռն, ուր տեղ խոզ շատ կայ»:

Քեռ իւր տեղէն խաղտեցաւ, ձիաւորները հինգ մասի բաժանեց, առաջին մասը յղեց որ Մուղուրայ ջրի ետևէն անցքերը բռնեն, երկրորդ մասն ևս ուղղակի ճանապարհով յղեց դէպի Խոզաթու լեռն, երրորդը Խօստայու կողմէն յղեց որ լեռան արևելեան կողմը բռնեն:

Դոքա թող գան, նակ մենք դառնանք Սեսեւին:

Այդ տեղ գտնուած վրաններու մէջ մի այլ պառաւ կար, Սեսեւ միշտ նորա պանիր ու իւղ կը յղեր, այդ պառաւն երբ լսեց Քեռ ահագին բանակով եկած է. լուր յղեց:— Սեսեւ, դու քեզ պատրաստ և զգոյշ պահէ... Քեռ թագաւոր հինգ ճանապարհով քո վերան զինուոր յղած է, իւր հետ քառասուն ուղտի բեռ շղթայ բերած է. որ քեզ բռնէ, առիւծդ, ինձդ և նարինջը մօտդ պահէ:



Սեսեւ չորս եղջիւրէ խոյն յղեց պառաւին.—մայրիկ, ասաց, վերջին օրս է. եթէ ողջ մնացի, դքեզ որպէս մայր պիտի ընդունիմ:

Խեղճ Սեսեւ, տեսաւ որ թշնամին ամեն կողմէ զինք շրջապատած. լրտեսներն ամեն կողմէ բարձրացած լեռներու գագաթներն, իրարու նշան կտան յարձակման: Իսկ ինքը հօտը ելցուց մի խոր ձոր՝ բարձրացաւ լեռան կուրծքն, որ նայի թէ ո՛ր կողմէ կգան:

Սեսեւ զգաց որ ամեն կողմէ շրջապատուած է. մի ոչխար ունէր, որը խատուտիկ էր, բուրդը կտրեց, մօրուք ու բեղ շինեց՝ շրեշան ևս երեսին քսեց, նշանը կորաւ, եղաւ ինձ պէս մի տգեղ և այլանդակ ծերունի:

Մի խումբ ձիաւոր մերձեցան Սեսեւին, Սեսեւ ձիանց վրէնչիւնն և ոտքերու արոտիւնն երբ լսեց, ետ դարձաւ:

Ձիաւորներու մին ասաց,—Բարև քեզ, հայրիկ:

—Ասատուծոյ բարին, հա, ո՞ւսալ կգաք, ո՞ւր կգնաք:

—Հայրի՛կ, ասացին, աչքերը մարգարիտ, ատամները սատափ, իւր հօտն ո՛ր մէկ կողմը տարաւ, չտեսա՞ր:

—Չէ՛, ոչ մարգարիտը գիտեմ և ոչ սատափը:

—Ապա դու ինչո՞ւ այդ տեղ նստած ես:

—Ապա ես ի՞նչ անեմ, այս ձորը վարշաղ շատ կայ, էշ մի ունէի, եկայ որ փայտ կառեմ, բառնամ, տանեմ, ծեր մարդ եմ, նստայ ծառի մի շուքը, էշս զնաց, երկու վարշաղ ձայնը լսեցին, եկան, յօշոտեցին:

Ձիաւորներն անցան, Սեսեւ սրինգը ածեց. հօտը առաւ գնաց Փիլիվանքու լեռն, ուստի ևս մինչև արշալոյս հասաւ Խոզաթու հովիտը, այս անգամին սև ոչխարի բուրդը կտրեց, մազ ու մօրուք շինեց, նարինջն ևս բերեց, թամքը զարկեց, փորքաշը քաշեց. հրացանն առաւ, տանձը տուեց ընձին, տեսաւ մի խումբ ձիաւոր դէմ իրեն ուղղուած եկան՝ բարև տուեցին:—Ասատուծոյ բարին, ասաց:

—Աչքերը մարգարիտ, ատամները սատափ, երեկ այս տեղ էր, այս օր ո՞ւր գնաց, ասացին:

—Չէ, չեմ տեսած, ասաց Սեսեւ.

Նոքա թոյլ տուին, գնացին, պառաւին ասացին—չգըտանք. միայն մի սև մօրուք մարդ տեսանք:

—Այն լոկ Սեւանն է, ասաց պառաւը, զձեզ խափած է, ես ձայնէն կը ճանաչեմ։ Գնանք, երբ ես ձեռքս նշան տամ, հասէք, բռնեցէք։

Պառաւը մօտեցաւ Սեւանին, ձիէն իջաւ, ձեռներն ետև կապած՝ ժիր—ժիր գնաց դէպի նա. լոկ Սեւան մի հինաւուրց հաստաքուն և մէջը փապար դարձած ծառ կար, քամակը ներս՝ լոկ երեսը դուրս դարձուցած՝ նստած էր և ծխախոտը իրարու վերայ կը ծխէր։

Պառաւի աչքերն որ Սեւանին առաւ. անմիջապէս իւր խմբին նշան տուաւ՝ ձիաւորներն անմիջապէս հասան պառաւի մօտ, Սեւան նստած տեղը հրացանը շտկեց պառաւի ճակատին ու զարկեց ձգեց։

Սոյն հրացանի ձայնի վերան Առիւծն ու Ինձը հասան Սեւանի մօտ, հրամանի կոպասէին որ գամենն ևս յօշոտեն։

Սեւան թռաւ ձիու վերան, քշեց որ գնար դէպի հօտի կողմ. լոկ Քել ինչ արաւ—ամեն կողմ երեք կարգ շղթանեբով պրկեցին. որ Սեւանը բռնեն, նրանք որ հետի էին, շղթաներն էին բռնած. նրանք որ ձիաւոր էին, քշեցին Սեւանի վերան որ բռնեն. լոկ Սեւան իրեն մօտեցողին մի թրի հարուած կտար, ձիով կը ձգեր գետին. այսպէս խմբի կէսը սպանեց։

Առիւծն ու ինձ հեռին նստած կը դիտէին, լոկ Քել ինքն իրեն կը մտածէր թէ այդ կռուող ոև մօրուքը եթէ Սեւանն լինէր, առիւծ և ինձը կռուի պիտի մտնակցէին, ուրեմն նա չէ։ Բայց իւր հրամանը սաստկացոյց։—Ինչ այլ լինի, պիտի բռնէք։

Երբ մի երկրորդ, երրորդ խումբ ևս շրջապատեցին, հաւաքուեցան Սեւանի վերան, Սեւան ձայն տուաւ։—Առիւծ և ինձ; ահա նոր եկաւ մեռնելու ու ապրելու օր, հասէք։

Առիւծն ու ինձը հասան, Քել նոր հասկացաւ որ նոյն անձը Սեւանն է,

Սեւան իւրաքանչիւր քայլին մի թրի հարուած կտար, լոկ առիւծն ետևէն, ինձն առջևէն, ինքն ևս մէջտեղէն ջարդեցին քո որսի ուզածի չափ։

Քայքայում ընկաւ Քելի բանակի մէջ. մեծ մասը մեռաւ, մնացածը սկսան փախչիլ, Առիւծ ու ինձ ուղղեցան



Քելի կողմ. Քել դարձաւ միւս մնացած խումբը բերեց, հրաման արձակեց։

—Այս անգամին զարկէք, սպանեցէք Սեւանին, ասաց. մի՛ բռնէք, նա բռնուելու դաղաններէն չէ։

Սեւան մինչոց գտաւ, հօտը քաշեց, տարաւ դեպի Հաւլորու լեռն. իւր քեռիներու վրաններուն մերձեցաւ։

Քեռիներու մին Ջորեպան էր, Բերդակ պանիր տարաւ, վաճառեց, դառնալուն պատերազմի վայրը պատահեցաւ, տեսաւ—ինչ տեսնայ.—հազար ոչխար ջարդուած, մարդու դիակի հաշիւն ևս չկայ։ Այդ տեղ մի ծերունի տեսաւ, հարցուց.—Սոքա ինչ դիակներ են։

—Աչքերը մարգարիտ, ատամները սատափ մի հովիւ կար, երեկ Քել Թագաւորի հետ կռիւ արաւ, լոկ այսօր Քել մեծ պատրաստութիւն կը տեսնայ. այլ ևս հրաման արած է. չպիտի բռնեն, այլ սպանեն։

Քեռին այս որ լսեց, Սեւանի հետքը բռնեց ու գնաց. գնաց—ինչ տեսնայ—ճանապարհն արիւնով ներկուած է. երբ հասաւ Սեւանին, տեսան իրար, ուրախացան, հօտը միասին քշեցին Հաւլորու լեռը։

Սեւանի օձիքը չար պառաւէն պրծած էր, լոկ բարի պառաւն՝ որուն Սեւան պանիր, իւղ կտար՝ նորա աչքը միշտ այս՝ այն կողմն էր, միշտ կը դիտէր Թշնամին, այս անգամ ևս հետաքրքիր եղաւ. յայտնեց Սեւանին թէ.—Այդ տեղէն հեռացէք, Քել ահագին բանակով ձեր ետևը բռնած է։

Այդ տեղէն ևս հօտը քաշեցին, անցան Փախի դաշտն, որտեղ երեք օր մնացին. ապա լուր առին որ Քել մօտ է։

Սեւանը տասն երկու քեռի ունէր, նոքա ասացին։

—Գնանք Տէրօվան, մեր քամակները տանք Կլօր Թագաւորին։

Սեւան և իւր քեռիները բարձան, գնացին Տէրօվան, բայց առաւօտեան երբ զարթեցան, տեսան որ դաշտի ամբողջ շուրջը Քել իւր բանակով պաշարած է. մի տեղէն անցնելու ճար չկայ. Սեւանի քեռին—Տէրօվան քահանայն՝ լուր յղեց Կլօր Թագաւորին, Կլօր Թագաւորն ևս հարցուց։—Լուր յղած էք Լուսիկ Թագաւորին, թէ չէ։

—Մեր շուրջը թշնամին պաշարած է, անցք չկայ։

Կլօր հաւաքեց իւր ձիաւորները, մի ձիաւոր ևս Լուսիկին յղեց։ Ձիաւորը քշեց Ճիլքայ՝ Շոռանայ՝ Սնտամու քարի տակէն անցաւ, վերի և ներքի Թաճըրով գնաց Թանձուստի Բերդակ, Լուսիկ Թագաւորին դուժեց դէպքն և յօդնութիւն կանչեց։

Լուսիկ անմիջապէս իւր զօրքով հասաւ Հաւլորու լեռը, պատահեցաւ բարի պառաւին, պառաւ որ տեսաւ Լուսիկին, ասաց։—Ի՞նչ կանգնած ես, Լուսիկ, շտապէ, այժմ Քեռ Թագաւորի առաջ աշխարք—լեռ ու դաշտ գող առած է։ Եթէ փոքր ինչ ուշանաս, աւեր կը դառնայ աշխարք և Սեռեի դիակը միայն պիտի տեսնես։

Լուսիկ քշեց, ետևէն հասաւ Քեռին։ Կլօր ևս առջևէն հասաւ, սկսան պատերազմիլ։

Զ՛արկ, որչափ կարող ես զարնել, զարկ, որչափ կարող ես զարնել։ Երկու օր սատիկ կռուեցան, Քեռի դիակներով ամբողջ դաշտ լցուեցաւ։ Կլօր Թագաւոր ձայն ձգեց։—Այ քեզ անիրաւ Քեռ, դու եկած՝ իմ հողի միջէն աղջիկ կուզես փախցնել, մինթէ ես մեռած եմ։

Դարձաւ Կլօր իւր ձիաւորներուն ձայն ձգեց։—Տղայք։ քշեցէք առաջ, Թերենիգ մերկ՝ մի մարդ յետ մնաց, նորա մահն իմ ձեռն է։

Կլօր, Քեռ և Լուսիկ հետզհետէ մօտեցան և խառնուեցան իրար։ Լուսիկ կռուի եռ տեղը տեսաւ մի կարմիր ձիաւոր և սև մօրուաք, առիւծն ու ինձը հետը մղուած են կռուի։ աջ ու ձախ կը զարնեն ու կը ջարդեն։—Վայ, ասաց Լուսիկ, ձին, առիւծն ու ինձը մերն է։ իսկ Սեռեի չկայ, Նորան կամ փախուցած են, կամ պահած և կամ սպանած են։

Ձին լեցուց (արագ քշեց), հասաւ, դու ի՞նչ մարդ ես, հարցուց։

—Այսպիսի միջոցի մէջ կը հարցնե՞ն, եթէ կարող ես, մտիր պատերազմ, վերջը կիմանաս։

Մտան պատերազմի մէջ, խառնուեցան միմեանց։ այլ ևս երեք կողմի մարդիկ չեն ճանաչուիր թէ ո՞ր մէկը ո՞ր կողմէն է։



Հ՛ա, հոգիդ սիրեմ, Լուսիկ։ ի՞նչ արաւ Լուսիկն։—առիւծի պէս մռնչելով մղուեցաւ ու մխուեցաւ Քեռի բանակի մէջ։ մի կողմէն գետին թափելով՝ միւս կողմէն դուրս ելաւ։ Քեռ Թագաւոր քշեց որ փախնէր, Լուսիկ առջևն առաւ, կանգնեցուց, ասաց։

—Քեռ, դու ես որ մարդ պիտի տանիս, դո՞ւ ես, որ զիս լեռնէ լեռ ձգած՝ կը չարչարես սարերու ու ձորերու, քարերու ու փուշերու մէջ։ ասաց ու մի թուր ձգեց, գլուխը թռաւ, ընկաւ գետին, ինք դարձաւ։

Կլօրն այն կողմէն ասպանդակեց, ձինքշեց Սեռեի վերան, տեսնելով սև մօրուաքը, կը կարծէր թէ թշնամիներէն է։—Միայն այդ է մնացած, դորան ևս յղեմ իւր եղբայրներու մօտ, ասաց։

—Ձեղնէ, ձեղնէ եմ, ի՞նչ կանես, ուր կգաս, ասաց Սեռեի։

Քեռ մեռաւ գնաց, նորա ամբողջ բանակը կոտորեցաւ, Լուսիկն ու Կլօր գտան իրար։ գնացին Կլօր Թագաւորի ապարանքը հանգստանալու։

Լուսիկ իւր աչքերը չորս կողմ յառած՝ շարունակ կը դիտէր որ տեսնէ իւր Սեռեին, բայց նա չկար, յանկարծ միտքն ընկաւ—ի՞նչ էր այն սև մօրուաքը ասաց թէ «յետոյ կիմանաս»։ Թերևս նա պահած լինի։ գնամ, իրմէ հարցնեմ։

Գնաց այն մարդը գտաւ, հարցուց։

—Աչքերը մարգարիտ, ատամները սատափ ո՞ր տեղ կը լինի։

—Արի՛, Լուսիկ, որ քեզ ցոյց տամ։ ասաց նա։

Նա առաւ զԼուսիկ, գնաց Կլօր Թագաւորի, նաև իւր հօր ու մօր և քեռիներու առջև կանգնեցաւ։ մօրուաքը ու քեղը քանդեց։ հովուական շորերը հանեց, հագաւ աղջկան շորերը։

Ելան իւրեանց աղգով ու ազգականով, բարեկամով ու դրկեցով հաւաքուեցան, առին Սեռեի քեռի տէրտէրն ևս հետերնին, իջան Սուրբ Տիկին, Լուսիկն ու Սեռեի հովիկ պսակեցին, դոհուլ, գուռանդ։ սրինգ ու զուռնայ։ սաղ ու ջութակ ածելով գնացին Բերդակ՝ ուր եօթն օր, եօթ գիշեր հարսանիք արին։

Քառասունքն երբ վերջ գտաւ։ Լուսիկ գնաց Սեռեի մօտ։ ձեռքը ձգեց և փաթաթեց, քաղցրիկ համբոյր մի

առաւ. ապա առագաստի գիշերը շոշափեց տեսաւ որ Սեռևէ քամակն մի գուբ տեղ կար:

—Այս ինչ է, հարցուց:

—Ես երբ փոքր էի, երկու մարդ եկած են մեր տունը մէկը ղես սպանեց, դանակը փորուս մէջ թողեց, գնաց. Աստուած ղես պահեց, մայրս այն դանակը ինձ տուած է. կասէ, «այն դանակը քո արեան գինն է»:

—Սեռև, քո հոգուն մատաղ, ելիր, բերը, տեսնեմ ինչ դանակ է:

Սեռև թագուհին գնաց, բերեց, Լուսիկն որ տեսաւ, ասաց:

—Այո՛, այո՛, Սեռև, արդարև ճակատագիրը չի եղծուիր, Աստուած ինչ որ կամեցած է. այն պիտի կատարուի. այդ դանակն իմս է, ես մտած եմ այդ մեղքի տակ:

Սեռև ու Լուսիկ ուրախացան, Աստուած ևս ձեզ ուրախացնէ:

ՀՀ Ազգային գրադարան
NL0242597